


ԲԱՐՁՐԱՅԻՐ ԲԱՐՁՐԱՅՈՒՐ




# Ն.Ս.Ը.Ս.

ԲԱՅ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԳԱՆՈՒԻ ՄԻՈՒԹԻՒՆ  
• ԲԻՄԵՍԱԼ 1918 ԻՄ •



## HOMENETMEN — Hai Scout —


REVUE MENSUELLE DE SCOUTISME  
ET DE CULTURE PHYSIQUE  
Organe de l'U. G. Arménienne



Ս. ՉԵՇԵՍԿԱՆ

ԹԻԻ 7-8 Հոկտ. - Նոյեմբեր — 1946 — Oct.-Novembre N°7-8

ՀԱՐՁՐԱՑԻՐ ՀԱՐՁՐԱՑՈՒՐ



# Ն.Մ.Ը.Մ.

հԱՅ՝ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴԴԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՆ  
• ԲԻՄՆԵԱԼ 1918 ԽՆ •



## HOMENETMEN


### — Hai Scout —

REVUE MENSUELLE DE SCOUTISME  
ET DE CULTURE PHYSIQUE

Organe de l'U. G. Arménienne



թի 7-8 Հոկտ. - Նոյեմբեր — 1946 — Oct.-Novembre N°7-8



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԽՕՍԻԸ

Հ. Մ. Ը. Մ. ը երեկուրմէ այսօր

Ի՞նչպէս ազնուացնել մեր ցեղը

Մեր ցնծատօնը

Լուսաւորիչը

Հ. Մ. Ը. Մ. եւ իր մարգիկները

Հայկ ձիգմէնեանին

Սկառտիմք Առաջնորդը

Մեր բարեկամ ջուրը

Պէտքն Բառլի կեանքն ու գործը

Հայ Սկառտը կը սիրէ իր ազգը

Ֆուրպօլ

Հ. Մ. Ը. Մ. ի Յուշատետրէն

Գ. ՄԵՐ ՃԱՆՕՅ

Ա. ԿԱՊԵՆՑ

Յ. ՕՇԱԿԱՆ

ԺՊՏՈՒՆԻ

Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

ՇՆԱԳԱՅԼ

ԳՆԴԱՍԷՐ


ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ՄԱՐՍԷՅԼԻ ՍԿՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԷՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

ՀԱՅԿ ձԻՋՄԷՃԵԱՆ

ՕՐ. ՇՈՒՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ



4306-57



## ՖՐԱՆՍԱՅԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Բացառիկ կարեւորութիւն մը կը ներկայացնէ Ֆրանսայի շրջանի Պատգմ. Ժողովը, որ կը գումարուի Գեղար. 26—27-ին, Բարձրի մէջ, Առժամ. Կեդր. Վարչութեան հրաւերով:

Բացառիկ՝ որովհետեւ պատերազմի եւ գրաւման շրջանի անխուսափելի կազմալուծումէն յետոյ, սկսելով մէկ - երկու Մասնաճիւղերէ, Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ը այսօր կը ներկայացնէ բազմաթիւ եւ ստուար Մասնաճիւղերու ամբողջութիւն մը, եռանդուն եւ առոյզ, իր առջեւ ունենալով գործունէութեան լայն դաշտ մը եւ առաջադրութիւններու նախադիմ մը, որուն իրականացումը, կարճ ժամանակի մէջ՝ Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ը կը դարձնէ տխար շրջաններէ մէկը:

Բացառիկ՝ որովհետեւ, Պատգմ. Ժողովը կը բացուի, նախկին անպէտ եւ այսպէս չհակամարտութեանց վերացման, մաղահան ալիւսայ խմբակցութեանց՝ Հ.Մ.Ը.Մ.ի հետ ձուլման նշանաբանին տակ:

Որովհետեւ նաեւ, ան կը շուրջադիպի հայ ժողովուրդին համար՝ պատմական մեծ նշանակութեամբ յուստիական իրողութեան մը — Նեիթ-Ալթը, որ նոր պարտահաճութիւններու առջեւ կը դնէ Հ.Մ.Ը.Մ.ը եւ որոնցմէ չի կրնար խուսափի՝ առանց դժբեյու եւ երբումը՝ ԾԱՌԱՅԵԼ ԱԶԳԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ:

Պատգմ. Ժողովը կը շուրջադիպի զլիսաւորաբար՝

ա) Հաստատելու մարզական զանազան խմբակցութեանց Հ.Մ.Ը.Մ.ի հետ միացման իրողութիւնը եւ զայն նուիրագործելու:

բ) Փակելու վերակազմութեան շրջանը, Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ը օժտելով կանոնադրով մը՝ որուն պակասը՝ տարիներէ ի վեր զգալի, կը նպաստէր քաջաբերութեան հետեւ եւ ինքնազուխ գործունէութիւն մը, ինչպէս նաեւ, Շրջ. Վարչութիւնով մը, որ ձեռնհասօրէն, ղեկը բռնէ այսքան տարածուն բազմաճիւղ զանդուածի մը:

գ) Ստեղծելու ներքին համերաշխ մըլ-նոլորտ մը եւ ազդանշանը տալու ներդաշնու եղբայրական գործակցութեան մը:

դ) Մշակելու ընդհանուր գործի եւ սկանտական զարգացման ու տարածման ծրարադիր մը:

Հասնելու համար այս օրուան, շատ քիչերը միայն ծանօթ են տքնաջան ու յարատեւ աշխատանքին, աչալուրջ հսկողութեան եւ ամենօրեայ հեւասպառ ու փութկոտ գործունէութեան, որ պարտադրուեցաւ Առժամ. Կեդր. Վարչութեան:

Հոն ուր արդիւնաւէտ աշխատանք կարելի էր կատարել նուազագոյն յոգնութեամբ, եղբայրական տարուկ մթնոլորտի մէջ, պէտք եղաւ կորով ու միտք սպառել, կանխելու համար պառակտումի փորձեր:

Հոն ուր կարելի էր գործ տալ, դրական, շօշափելի եւ բազմօգուտ, հայ երկ-

սեռ պատանեկութեան եւ երիտասարդութեան հաշտոյն, անխուսափելի դարձաւ սնամէջ վէճերով յողնիլ՝ կոտորելու համար սնափառութիւններու, անարժէք յաւակնութիւններու եւ անձնական հաշիւներու թունաւոր ազդեցութիւնները:

Եւ այս բոլորը՝ մարդոց կողմէ, որոնք կը յաւակնէին խօսիլ յանուն Հ.Մ.Ը.Մ.ի...

Աւա՛ղ, այսօր կ'ուզէինք զովքը միայն հիւսել եղբայրական ջերմ դորձակցութեան մը, եւ ՀՄԸՄ.ի մեծ գերդաստանին վայել ամրակուռ միասնականութեան:

Կ'ուզէինք Հ.Մ.Ը.Մ.ի կենսական շահերուն հանդէպ միօրինակ լըմբոնումի, եւ անշահախնդիր հոգածութեան օրինակ ցոյց տալ այս շրջանը:

Անշուշտ, մէկ քանիներու եւ իրենց արանեակներու արկածախնդրական գործունէութիւնը, ուրիշներու դիտումնաւոր գրգռութիւնները չեն կրնար որեւէ կերպով վտանգել մեր զանդուածին ամրակուռ շէնքը:

Կը բաւեն սակայն, հանրութեան մէկ մասին մտքերը պղտորելու, կասկածի եւ վերապահութեան մղելու, համակրութիւններ ուժացնելու եւ ղեկավարութեան պարտադրելու աւելորդ հոգեր ու ժամանակի եւ ուժի վատնում:

Ա՞յդ է, որ կ'ուզէին ՈՄԱՆՔ, մատի վրայ համրուող մէկ քանիներ...

Եթէ այդ էր որ կ'ուզէին, կը խոստովանինք թէ յաջողեցան...

**ԲԱՅՅ ՅԱԶՈՂԵՑԱՆ, ՈՐՈՎ ԼԷՏՏԵՒ ՄԵՆՔ ՈՒՁԵՅԻՆՔ ՈՐ ՅԱԶՈՂԻՆ...**

Ուզեցինք որ իրենց սեւ հաշիւներուն ծայքերը իրենք իսկ իրենց ձեռքով պարզեն ու պարզուին:

Աղտեղութիւն ու գարշանք, բարեկամներն իսկ կը փախցնեն նողկանքով:

Այդ եղաւ գրգռիչներուն յաջողութիւնը:

Յաղթանակը մնաց մեզի:

Ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ:

Որովհետեւ, գործին մէջ եւ անոր շուրջ՝ անկեղծութիւնը չի կրնար հաղորդական չըլլալ:

Որովհետեւ, անշահախնդրութիւն եւ անձնութիւն չեն կրնար չվարակել եւ անպտուղ մնալ:

Որովհետեւ հանրօգուտ ձեռնարկի մը ծառայութիւնը չի կրնար երբեւիցէ ստորադասուիլ՝ անձնական ճղճիմ փառասիրութիւններու եւ դժուած հաշիւներու:

Ահա թէ ինչո՞ւ, ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱՃԻՒՂՈՎ ՍԿՍՈՒԱՅ ՇՐՋԱՆԸ ԻՐ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԸ ԿԸ ԳՈՒՄԱՐԻ 30Է ԱՒԵՂԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՎ:

Ահա թէ ինչո՞ւ, Յրանսայի Շրջ. Վարչութեան առջեւ հողը պատրաստուած է՝ Մասնաճեղդերու թիւը բարձրացնելու շատ կարճ ժամանակի մէջ՝ 50ի (ՅԵՍՈՒՆ):

Յիսուս Մասնաճիւղ՝ ամէն մէկը իրեն կապուած սկաւտ խումբերով, բայց կապուած ամբօրէն, անբակտելի, հայ ժողովուրդին՝ անխախտ վստահութեամբ, եւ ո՛չ թէ խաբէութեամբ ու դաւով, օտարէն կորզուած իրաւասութիւններով...

Ահա թէ ինչո՞ւ, ճամբելէ յետոյ ներգաղթի կարաւանները՝ կը խոստանանք (եւ Հ.Մ.Ը.Մ.ի խոստումը երգում է) պալ տարի այս թուականին՝ Մնացորդաց ներկայացնել առնուադն 2000 սկաւտներու զանդուած մը, պատրաստ՝ իրենց կարգին ծառայելու ժողովուրդին եւ հայրենիքին, ծծած ու իւրացուցած սկաւտութեան զաւանանքին բարձրարժեք ներշնչումները, տողորուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի անխախտ ու անվերապահ հայրենասիրութեամբ, եւ ո՛չ թէ ցախա ծախելու ծիծաղելի սնափառութեամբ:

Բոլոր տարբեր ունինք հաւատքով՝ այժմէն իսկ եղբայրացնելու թէ Պատգմ. Ժողովը իր առջեւ դրուած բոլոր հարցերը պիտի ձեռն ու լուծէ եղբայրական սերտ գործակրութեան կաօստով, եւ իր աշխատանքին ու պիտի փակէ՝ իր հետ տանելով, մինչեւ հեռաւոր վայրերը, անմոռանալի տառապանքներ, բազմաթիւ տակներ եւ մանաւանդ՝ մտերմական մթնոլորտի մը զերշնչումները՝ հանրօգուտ նպատակին առջեւ, աւելի տենդաւոր, աւելի յամառ աշխատանքի ուխտով:

Մ. Ե.

# Հ. Մ. Ը. Մ. Ը ԵՐԷԿՈՒԸՆԷ ԱՅՍՕՐ

ԵՄԲ. — Հ.Մ.Ը.Մ.Ը-ի գաղափարական կացութեան մէջ, երէկուրմէ այսօր՝ փոխւած բան չկայ:

Ստորեւ ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ 1934, նոյեմբերի քիւիմ խմբագրականը, իմն էջ մը որուն խօսքերը կրնամք այսօր դեռ կրկնել:

Մեր խօսքը պարզ է: Անգամ մը եւս կ'ուզենք բացատրել Հ.Մ.Ը.Մ.Ը-ի ծագումն ու գոյութեան իրաւունքը:

Հ.Մ.Ը.Մ.Ը-ը հիմնուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, 1918ին, Զինադադարի յաջորդ օրերուն վաւերացուեցաւ Աղդ. Կեդր. Վարչութեանէն իբրեւ Հայ Աղդ. Ընդհ. Միութիւն, և ունեցաւ իրրեւ պատուոյ նախագահ՝ Զաւէն Պատրիարքը: Այնուհետեւ ան դարձաւ օթանդակ մարմինը հայ ազգային վարժարաններուն՝ մատաղ սերունդի՝ դաստիարակութեան գործին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ը-ի ծնունդը սակայն պատահական երեւոյթ մը չէր մեր ազգային կեանքին մէջ, ոչ ալ խմբական քմահաճոյքի մը մէկ խաղը եւ կամ սոսկ դնդերապաշտութեան տենչ մը:

Ո՛չ ան ազգային գերագոյն պէտքի մը արդիւնքն է: Յիշեցէ՛ք վայրկեան մը այդ օրերը՝ յիշեցէ՛ք այն հատաչանքը որ ծուխի մը պէս կը բարձրանար ամէն հայ սըրտէ. — Հայ չմնաց երկրիս երեսին:

Ի՛նչ շուտ, ի՛նչ շուտ մոռցանք այդ ծուխը: Ամէն հայ հոգիի գերագոյն ու հրամայական պահանջը այդ օրերուն մեր Ազգային Գոյութեան հարցն էր: Ահա՛, այդ հրամայական պահանջն էր որ ծընունդ տուաւ Հ.Մ.Ը.Մ.Ը-ին:

Քա՛նի մը անձուկէր երիտասարդներ հիմը դրին անոր, իրենց ուժերուն ներած չափով, սատարելու մեր ցեղի գոյութեանը:

Մեր մ/ակ սկզբունքնէր Հայ ժողովուրդի գոյութիւնը. մեր միակ կրօնն էր դարձեալ Հայ ժողովուրդի գոյութիւնը:

Ը՛նել ամէն կարելին միայն ու միայն Հայ ժողովուրդի գոյութեան ի խնդիր: Այս հաստատ ու անյեղի վճիռով Հ.Մ.Ը.

Մ-ը հրապարակ իջաւ, ու այդ նպատակին իրրեւ միջոց ընտրեց Սկաւտիզմը ու Մարմնակրթամբը:

Որոշեցինք Սկաւտիզմին ու Մարմնակրթման մէջ ի մի հաւաքել մատաղ սերունդը եւ այն բեկորները ցեղին, որոնք հիւժած ու սպառած, բայց դունդ առ դունդ Պոլիս կը հասնէին անապատներէն հրաչքով աշատուած, մերկ ու բոպիկ, ու թրքական որջերէն, ուր՝ անոնք խմբուած էին կամ մեռնելու կամ թրքանալու:

Ո՛չ մէկ հասանքի կողմ էինք. ոչ մէկ դաւանանքի ու դասակարգի խտրութիւն կը դնէինք: Ամէնքն ալ անխորհր հայ էին, եւ ամէնքը անխորհր եղբայր:

Մեր սկզբունքը նոյնը կը մնայ այսօր, եւ նոյնը պիտի մնայ մինչեւ վերջ: Նոյնը կը մնայ նաեւ մեր ընտրած միջոցը:

Հաւատքն ունէինք մեր գործին, նոյն հաւատքն ունինք այսօր, եօթնապատիկ առաւել յոյժ:

Հաստատ համոզում ունէինք նաեւ — ու զայն կը պահենք մինչեւ այսօր — այդ միջոցներու դերին ու արդիւնքին մասին: Այդ համոզումը կուզար մեզի դարբերու խորքէն, հի՛ն ազգերու կեանքէն...

Հին Յոյներու օղիմպիական խաղերը մեզ կ'առաջնորդէին լուսավառ ջահերու պէս: Ամէն թշնամութիւն վերջ կը դանդաղ այդ խաղերուն. Սպարտան ու Աթէնք այդ տօներուն եղբայրացած իրենց յաղթական մարզիկներուն արձանները կը կեցնէին իրենց աստուածներու տաճարներուն մէջ:

Հի՛ն Պարսիկները դարե՛ր ու դարե՛ր կըթած են իրենց սերունդները անոնց սորվեցնելով միմիայն երեք բան, ձի նըստիլ, միզակ արձակել եւ նշմարիտ խօսիլ:

Նոյնը չէին միթէ մեր Նաւասարդեան խաղերը, ուր՝ ձիարշաւներ, կառարշաւներ եւ զանազան ուժի փորձեր տեղի կ'ուրենային:

Հիներէն եկած մարմնակրթանքի այդ հմայքն ու ազդեցութիւնը այսօր իսկ, այս քսաներորդ դարուն, կը սաւառնի դեռ

քաղաքակիրթ ազգերուն վերեւ ու կը տիրապետէ նոր սերունդին:

Այս օրերուն միջազգային ողիմպիա - կանները, սկառուտիզմը ու սոքոլական կազմակերպութիւնները միթէ շարունակութիւնը չեն անոնց:

Հ.Մ.Ը.Մ.ը թունդ հաւատացող մը այդ Հինին, ուզեց անոնց կողքին վերստեղծել նաև հայկական Նաւասարդը, անոր շնորհիւ պրկելու նոր սերունդին զնդերները Հայ ուժով և Հայ հոգիով:

Յուսացուած արդիւնքը տուած ան: Այս հարցումին պատասխանը հարցուցէք Պոլսէն մինչեւ Երեւան, Պոլսէն մինչեւ Ամերիկա, Եւրոպա, մինչեւ Սուրիա և Եգիպտոս նոր հասակ նետող սերունդին: Անոնք իրական հէքեաթներ պիտի պատմեն ձեզի:

Բայց մենք չենք ուզեր կանդ առնել այդ անցեալին առջև, որովհետեւ ներկան աւելիքան երբեք հրամայական է, ու կ'ուզենք հարց տալ մեզի. — Կատարելիք գործ ունի՞նք այսօր:

Այո՛, եղբայրներ, առաւել քան երբեք:

Մեր ազգային գոյութեան խնդիրը այս օր եօթն անգամ աւելի՞ծանր է քան ինչ որ երէկը: Մեր ժողովուրդի կէսէն աւելին կը հիւծի աշխարհի չորս ծագերուն ցան ու ցրիւ: Զուլման ու այլասերման վտանգը դամոկլեան սուրի պէս կախուած է մեր մատող սերունդի վզին, որոնք կը կազմեն մեր ցեղին ապագան:

Հայ ժողովուրդը «Ապրիլ 24»ի եղեոներ շատ անգամ ունեցեր է. բայց, ոչ մէկ անգամ Հայ ժողովուրդը այնքան ախտաւեր հողերանութիւն ունեցեր է որքան այսօր: Ոչ մէկ անգամ Հայ ժողովուրդը այսպէս զանդուածով ծառայած է իր աւանդութիւններուն և մեռններուն դէմ և հայհոյած իր սրբութիւններուն:

Գիտակցօրէն թէ անգիտակցօրէն Հայ ժողովուրդը անձնասպանութիւն կը փորձէ: Այս ահաւոր ախտն է որ վերջ տուած է բազմաթիւ պատմական ազգերու կեանքին:

Այս ահաւոր կացութեան առջև պէտք է որ հայ երիտասարդները միահամուռ ծառանան, պէտք է որ անոնք միանան ու ձեռք ձեռքի եղբայրօրէն դործեն ու եօթ-

նապատիկ առաւել յոյժ, եթէ չենք ուզեր որ մեր պատմութիւնը սև վճիռ մը արձանադէ մեր ճակտիւ վրայ:

Ամէն սնրտի վէճ կը հետացնէ մեզ մեր նպատակէն: Ոչի՛նչ կայ աւելի նուիրական քան մեր ազգային գոյութիւնը: Տարա - կաբժութիւններու ժամանակը չէ այժմ. ամէն կիրք պէտք է լռէ: ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՄէ՛ն ԲԱՆ՛է ՎԵՐ:

Երիտասարդ եղբայրներ, ամէն ժամանակի ու միջավայրի համար՝ նոր սերունդըն է որ հիմքը կը կազմէ ազգի մը գոյութեան: Առանց նոր սերունդի անհնար կը դառնայ ազգի մը գոյութիւնը: Նոր սերունդը եթէ կայ, Աշգը կայ. այլապէս կը կորսուի՛նք: Նոր սերունդն է ազգիւրը ամէն Ֆիզիքական ու մտաւոր ուժի, որ կը վարէ ազգի մը ճակատագիրը:

Արդ, մեր խօսքն է մեր սկզբունքը, այն է առանց դաւանանքի, հատուածի ու դասակարգի խտրութեան, լծուիլ գործի, մեր տառապնալ ու պատուական ցեղի գոյութեան ի խնդիր: Մեռցնէ՛նք ժամանակի մը համար մեր ետական սի՛ն ձգտումներն ու փառքերը: Զեռք-ձեռքի պատրաստենք՝ Ֆիզիքայէս, մտաւորայէս բայց, մանաւանդ նկարագրով ուժող սերունդ մը հայ ուժով, հայ մտքով և հայ հոգիով:

Այդ կը պահանջէ՞մեզ Հայ Ազգը, որուն մենք ամէնքս պարտաւոր ենք ու պատասխանատու:

Ծա՛նր ու հսկա՛յ աշխատանք մը կը փոռի մեր առջև, բայց, քիչ եմ մշակները:

Ու այդ աշխատանքը կատարելու համար, այս դաղթաշխարհին մէջ գրեթէ բոլոր ասպարէզները փակ են մեր առջև:

Մէկ հատիկ դուրս, որ այսօր տակաւին բաց կը մնայ մէկ առջև, այդ բ՛ութեան ծոցն է: Հո՛ն է մի՛նակ, որ հայ երիտասարդը հպարտ ու բարձրաճակատ կր՛այ կենալ բոլոր ազգերու մարշիկներու կողքին ու պանծացնել հայ զնդերին ու հայ ոգիին շնորհն ու արժէքը:

Դարձեալ այդ դաշտին վրայ է, որ, անխտիր ամէն հայ սիրտ կ'ուռի ազգային միեւնոյն կարօտովը, միեւնոյն հողիովն

# ԻՆՉՊԷՍ ԱԶՆՈՒԱՑՆԵԼ ՄԵՐ ՑԵՂԸ

ԿՐԹՈՒԻԼ ՄՏԱՒՈՐԱՊԷՍ ԵՒ  
ՃԻԶԻԲԱՊԷՍ

Անցեալները Հ.Մ.Ը.Մ.ի Փութաօլի մրցումի մը զացած միջոցիս, Հ.Մ.Ը.Մ.եւական եղբայր մը ինձ կը հարցնէր թէ պէտք չէ՞ որ մեր Ֆիզիք.կրթութեան հետ մտաւոր զարգացման մասին եւս խօսէի : Ինչպէս է, եղբորս զիտողութիւնը շատ իրաւացի էր : Եթէ այդ մասին չէի խօսած, որովհետեւ զայն կը նկատէի շատ բնական : Այլապէս, ի՞նչ արժէք կը ներկայացնէ լոկ Ֆիզիքական զարգացումը, երբ մենք չկրթեմք նաեւ մեր միտքը : Մանաւանդ ներկայ պայմաններու մէջ մտքի զարգացման անհրաժեշտութիւնը չափազանց զգալի է, ուրմէ մտքի եւ մարմնի զարգացումը պէտք է տանինք հաւասար չափով,անոր շնորհիւ իրականացնելու համար «տողջ միտք, տողջ մարմնի մէջ» նշանարանը : Իմ կարծիքով, արդի դպրո-

ցը լաւ ուղղութիւն չէ ընտրած . մենք եւս Ֆրանսացիներու պէս առտուրնէ մինչեւ իրիկուն այնքան կը բեռնաւորենք մեր երեսաններու միտքը, նոյնիսկ կեանքի մէջ անպէտ դասերով, որ ան կը յողնի եւ ուժասպառ՝ այլեւս Ֆիզիքականի մասին ժամանակ չունենար մտածելու՝ եւ ճիշդ այդ եղանակն է որ դաստիարակները պէտք է սրբադրեն :

Եթէ կ'ուզենք մտքով ու մարմնով լաւ հաւասարակչուած սերունդ մը հասցնել, պէտք է առաւելապէս մտաւոր աշխատանքին ուժ տալ առաւօտները, ուսումնական ծրագրէն վերցնելով ինչ որ դործնական ու խկապէս դաստիարակչական արժէք մը չի ներկայացնէր ներկայ դարուս եւ ցորեկէն յետոյ լայն ժամանակ յատկացնել միմիայն մարմնակրթանքի : Ահա այն ատեն է որ մենք մտքի եւ մարմնի հաւասար զարգացում կարող ենք տալ մեր նոր սերունդին : Բաղձալի էր, որ մեր մտքի

ու հպարտութեամբը ի տես իր արի մարդիկներուն եւ սկառուտներու առնական գնացքին :

Այդ դաշտերուն վրայ կարելի է միայն զգալ ու ապրիլ այն հրաշքը որ կը կատարեն մեր անուշիկ սկառուտներն ու ասպետ մարդիկները իրենց ջնպիւնդ սրունքներու ներդաշնակ ուժին թափովը :

Չափազանցութիւն չէ եթէ ըսենք թէ՛ ամբողջ տարուայ մը բանաստեղծութիւնները չեն ձգեր այն ազդեցութիւնը, ինչ որ կուտան քանի մը մրցումները եւ սկառուտական արշաւները : Դպրոցական ամբողջ շրջանէ մը աւելի կ'ազդուի երեսան հայ մարդիկին պրկուած դնդերը, վազքն ու ոստումը տեսնելով եւ հայ սկառուտի ասպետական կենցաղը դոյժադրելով :

Ահա՛ այս աշխատանքն է որ կը կատարէ Հ.Մ.Ը.Մ.ը, ուղեռ, աւա՞ղ, նոյնինքն Հայերուս կողմէ՛ դիտումնաւոր արդեւեւներ կը յարուցուին այս գեղեցիկ ու ստեղծագործ աշխատանքին դէմ :

Հրամայական պարտք մըն է, ի սէր մեր ազգային դոյութեան, ի սէր օտարութեան մէջ այլասերուող ու հիւժող մեր մատաղ սերունդին բոլորուիլ Հ.Մ.Ը.Մ.ին շուրջ ու զօրավիզ ըլլալ անոր : Գոնէ արգելք չհանդիսանալ :

Ահա՛, մեր խօսքը :

Ձեռք ուղեր կանդ աննել այն քութիւններուն ու դժուարութիւններուն առջեւ, որ հոս հոն կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի դէմ :

Կ'ըսենք միայն, մե՞ղք է հակառակիլ այսպիսի Միութեան մը եւ կասեցնել անոր յառաջդիմութիւնը . Միութիւն մը, որ անխտրական է, որ հայ է միայն, իր ոսկորովն ու ծուծովը, եւ նուիրուած հայ տղիի պաշտպանութեան :

Հ.Մ.Ը.Մ.ը զուտ ազգային Միութիւն մըն է, եւոչ մէկի ազդեցութեան ենթակայ, ի բաց առեալ Հայ Ոգին :

Ահա՛ մեր խօսքը :

(1934, նոյեմբեր, ՀԱՅ ՍԿԱՌԻՏ)



զարգացման աշխատող ուսուցիչները ըլ-  
լային նաեւ մէյմէկ մարդիկներ:

### ՄԱՐԿԱՆՔ

Մարզանքի սկսելէ առաջ կարեւոր է նախ բժշկական քննութենէ անցնիլ: Այն անձներուն որ սրտի եւ թոքերու տկարութիւն ունին, բացարձակապէս վնասակար է: Իսկ անոնք որ առողջ են, անպայման պէտք է մարզանքը ընեն նոյնիսկ ամբողջ կեանքի տեսողութեան: Բայց ինչպէս ամէն բանի մէջ, մարզանքի մէջ ալ չափազանցութիւնը վնասակար է: Չափաւոր սահմանի մէջ մարզանքը յանձնարարելի է ամէն սեռի համար:

Մարզանքի ո՞ր տեսակները յանձնարարելի են եւ ո՞րը վնասակար:

Կարելի է քսանի չափ շարժումներ ընտրել եւ անոնցով դո՛հանալ:

Եթէ կ'ուզենք առողջ եւ ուժեղ մարմին ունենալ, պէտք է հետեւիլ շուէտական մարզանքին, որ իր մէջ կը պարունակէ այլազան շարժումներու տեսակներ, բնական է, մէկը միւսը յիշեցնող եւ կամ միեւնոյն օգտակարութիւնն ունեցող շարժումներ, զանազան ձևերու տակ: Անոնց մէկ մասը շնչառութեամբ կը կատարուի, միւս մասը առանց շնչառութեան: Ամէն մարզասէր լաւագոյն շարժումներով — շնչառութեամբ եւ շունչը բռնած — պէտք է ամէն առաւօտ անկողինէն ելլալուն, այդ քսան շարժումները կատարէ: Սկզբնականները երկ-երկու անգամ եւ ամէն երկու օրը աւելցնելով շարժում մը: Եւ այդպէս յաջորդաբար, մինչեւ քսան տեսակ շարժումներու բարձրացնել: Ամէն մէկ շարժումը տասնական անգամ ընելով, ամէն առաւօտ մենք 200 շարժում կ'ընենք, որ կը տեւէ 10 վայրկեան: Նոյն շարժումները՝ իրիկունը, պառկելէ առաջ՝ ճաշէն 2-3 ժամ վերջը, կամ ճաշելէն առաջ, ստամոքսը պարապ: Մարզանքը պէտք է կատարել զրեթէ մերկ վիճակի մէջ, կամ անթեւ չապիկով մը եւ կարճ ու թեթեւ վարտիքով: Մարզանքը ընելէ յետոյ, յանձնարարելի է կամ մարձում ընել եւ կամ շփում: Այս երկուքը մարմնին արագօրէն զարգացման կը նպաստեն, եւ կը

կանոնաւորեն թարմ արիւնի շնչանառութիւնը, ապահովելով մարմնին առողջութիւնն ու աշխուժութիւնը:

Մարզանքը պէտք է կատարուի մաքուր օդի մէջ, բաց պատուհանի առջեւ, կամ



Մեր հիմնադիրներէն ԳՐ. ՄԵՐՃԱՆՅՅ

բացօթեայ: Մտախլապատ օրերուն օրերուն բացարձակապէս յանձնարարելի չէ, եթէ չէք ուզեր հարբուխի նեղութիւնները ճանչնալ:

Վազելը չափաւոր սահմանի մէջ շատ օգտակար է: Նոյնպէս պարան ցատկէլ ամէն օր 100 անգամ օգտակար է: Լողալը շատ օգտակար է, պայմանաւ որ չափազանցութեան չտարուի: Սուսերամայտութիւնը նոյնպէս՝ մարմնին արագաշարժութեան տեսակէտով: Բալձրութիւն ցատկել, հոռաւորութիւն ցատկել, սկաւառակ, նիդակ նետել, այս բոլորը հիանալի մարզանքներ են եւ օգտակար, իսկ այն մարզանքները որ մասնաւոր ճիզի կարօտ են, թէեւ դժգոյնները կը զարգացնեն, բայց կեանքի տեսողութեան տեսակէտով, վատ անդրադարձումներ կ'ունենան: Օրինակ՝ ծալութիւն վերցնել, բմբշամարտութիւնը, կոփամարտութիւնը եւ գոյժիական մարզանքները. այսի՞ք, պառ Ֆիքս, բառայլ եւ այլն, ինչպէս ըսի դեղերներ կը շինեն, սակայն ներքին հիւանդութիւններ ալ առաջ կը բերեն. օրինակ, սրտի եւ

# ՄԵՐ ՅԵԾԱՏՕՆԸ

Ու բոցը բանակումի խարոյկին՝ կը ճարճատի:

Կանանչ բլրակի մը քղանցքին, ճերմկող կոյտերը հայ արիւնքու վրաններուն, մեծ թէ փոքր, պէտի թէ դարմանումի բաժանումներովը, անհունի դաղջ ու բուրումնաւիտ կամալին տակ՝ ուր ջահերը վառուած կը պծւտան՝ էջմաճանի Տաճարին յատակադիծը կը փռեն:

Ու հեռուէն՝ հեքովը կոհակ երու Քշչիւնին՝ երգի համայնանուագ մը կը մաղուի: Խմբերը մը ներդաշնակ, այնքան անո՛յշ, այնքան քա՛ղցր, որուն նմանը ոչ գրուած է դեռ, եւ ոչ ալ երգուած: Այդ երգը՝ անման Արարատի, Ալազածի, Երասխի, Զուարթնոցի ողիններուն ցնծերգն է, ընկերակցութեամբը՝ դալելէ ի վեր՝ աբեւելնա՛ թէ արեւմտեան բոնակայնեքու վայրագութիւններուն գոհուած՝ Վաղանի, Հայկի եւ Մաշթոցի թոռներուն՝ որոնք յարութիւն առած կ'երգեն փառքը Խորհ. Հայաստանի 26րդ տարեդարձին:

Ժպի՛տ, ժպի՛տ. կը ժպտի ամէն բան: Կը ժպտին՝ երկի՛քը, աստղերը, ծառերն ու ժայռերը: Ամէ՛ն բան, ամէ՛ն բան: Ու հիւրերը բանակումի այդ բացառիկ երեկոյթին, կը չբճանակեն երկսեռ պատա՛հներու կայտառ սերունդ մը, որ՝ ծնած օտար երկրի, օտար կլիմաներու

տակ, սալսուռն ունի անմահական ցեղիս սրտին, ու հլաւէրի հրճուանքը մեր Պապենական Հայրենիքին:



Սկառտապետը՝ որուն շնորհուած է նախագահութիւնը երեկոյթին, կը բանայ հանդէսը:

«Պալաններ, Տիկիներ, սիրելի հայրենակիցներ: Կը բանամ հանդէսը, ողջունելով 26րդ տարեդարձը մեր Պատանի Հայրենիքի, յանուն Գայլուկներու ու Կորիւններու, ու կը հրաւիրեմ ձեր բոլորը նկատել կեդրոնի խարոյկը, որուն բոցը կը ճարճատի, կ'ողջւորէ, կը լուսաւորէ մեզ: Ու մասնաւորապէս ուշադրութիւն դարձնել, թէ՛ ամէն վայրկեան՝ խմբակներու բոլոր անդամները, իրենց կարգին, մեծ թէ փոքր, մանչ թէ աղջիկ, ցորեկը իրենց պաշարած չոր փայտի, ճիւղի, արմատի կտորները կը նետեն կրակին վրան՝ որ պէտքի բարձրանա՛յ միշտ բոցը: Որպէս զի՛ չխաւարի մեր բանակատեղին, մեր գրոսավայրը, ուր քիչ յետոյ՝ պիտի տեսնէք անոնց պարերն ու խողերը: Անոնց հրճուանքն ու ցնծութիւնները, որ՝ կը ներշնչէ մեզի տարեդարձի տօը մեր ծաղկող Հայրենիքին: Մեր բոլոր սրտովը կ'ողջունենք զայն ու կը հրաւիրենք ձեզ

ստամոքսի տկարութիւն անխուսափելի է այս վերջիններու համար: Մինչդեռ շուէտական մարզանքներով մեր թ ո ք ե բ ը կ'ընդլայնենք, այլեան շրջանառութիւնը կը կանոնաւորենք եւ այսպիսով առողջ ու կայտառ կ'ըլլանք: Ծւէտական մարզանքներու մէջ ընտրեցէք շնչառութեան փորձերը եւ հաւասարակշռութեան փորձերը: Առաջինը կը ծառայէ ձեր թոքերը ընդլայնելու: Իսկ երկրորդը ձեզ կ'ազատէ շատ մը անակնկալ արկածներու ցաւալի հետեւա՛քներէն: Օրի՛ակ՝ փոսի մը մէջ իյնալու կամ սահողդէ մը գրորելու եւ կամ երկու կողքերու միջեւ մնալու պա-

բաղային, դուք ձեզ կրնաք հաւասարակշռել եւ ազատիլ փոքրագոյն վտանգով: Ետտ է պատահած որ ոտքը սահելով վարիկած մէկը թելը կամ սրունքը կտորէ: Եթէ հաւասարակշռութեան մարզանքներ ընէք 99% այդ վտանգներուն առաջը առած կ'ըլլաք, կատուի նման չորս ոտքի վրայ իյնալով:

## Գ. ՄԵՐ ԶԱՆՕՅ

ՅԱԶՈՐԳԻ ԹԻԻՈՎ, Եուէտական շարժումներու առանձին տախտակ մը, մանրամասն բացատրութեամբ:

հետևելու մեր Հայկորդիներու օրինակին: Բերելու համար անխտիր, փեթակի մը աշխատաւոր մեղուներուն պէս, ձեր մասնակցութիւնը վերաշինուող Հայրենիքին, որպէսզի ծաղկի զարգանայ, վառի՛, բարձրանա՛յ բոցը՝ մեր երազներու իրականացում՝ Պատանի Հայրենիքին:»

Պետական ներկայացուցիչ մը:

«Կուսեցանք, պայքարեցանք եւ յաղթեցինք: Ու կը պայքարինք դեռ՝ որպէսզի մեծնայ, զարգանայ մեր հայրենիքը, եւ դառնայ վերջին օթեւանը ձեր թափառականի ճամբորդութեան: Դուք եղբայրներն էք մեր: Մոռցած ենք մենք ամէն քէ՛ն: Եկէ՛ք, հրամմեցէք, ամենուղ ալ տեղ կայ մեր երդիքին տակ:»

Ներկայ դաղթական մը:

«Փա՛ռք հրաշալի յարութեանը մեր աննման Հայրենիքին: Սիբո՛ւ, հաճոյքո՛ւ կ'ընդունինք, խանդավառ՝ ինքնավստահ՝ անկեղծ՝ հրաւերը մեր Հայրենիքին, որ շնորհիւ իր հիւսիսի հարեւանին երկունքէն ծնած եղբայրական իրարհասկացողութեան եւ ընկերային արդար հաշուեյարդարին, մեր երկիրը դարձած է անբաժանելի մէկ մասնիկը հսկայ միութեան մը, ազատելով այլեւս՝ սալի եւ մուրճի միջեւ մնացողի արգահատելի դիրքէն:»

Կ'ընդունինք հրաւերը, առանց սակարկելու, առանց վերապահութեան: Կը բերենք մեր մասնակցութիւնը Հայրենիքի վերաշինութեան: Ու պատուոյ խօ՛սք, կը նուիրուինք անոր՝ որպէսզի չխաւարի այլ եւս արեւն ու լոյսը մեր Հայաստանին, մեր երազներուն հրաշալի իրականացման:»

Սկառուտ մը:

«Կ'երդնում անգամ մըն ալ՝ ըլլալ հաւատարիմ դաւանանքիս, ու ծառայել Հայրենիքիս:»

Ներկաները բոլորը միաբերան.

— Կ'երդնո՛ւնք, կ'երդնո՛ւնք, ծառայել Հայրենիքին:



Ու թամ-թամ մը թմբուկներու: Սկառուտներու շուրջպար մը կ'երբեայ. հեղ մը աջ, հեղ մը ձախ: Նախ դանդաղ ու հետզ-

հետէ՛ թամթամին ընկերացող հանդիսականներու համաչափ ծափ զարկին՝ ու հրճուանքի ճիչերուն հետ՝ պարը խելայել՝ զափականութիւն (cadence) մը կը ստանայ:



Ու պահ մը լուռիւն նորէն: Եւ յանկարծ՝ զիչերուայ խորո՛ւնկ խորհուրդին, հազիւ նշմարելի վաշաղոյրի մը շղարշին ետին՝ փակման խօսքը արտասանելու համար՝ կը յառաջանայ ուրուականը Օշականին՝ կացի՛ններէն ճողոպրած մեր վատակաւորնէրէն է՛ն արժանաւորներէն մին՝ ու Լուսաւորչի բերնով կ'օրհնեքէ՛ ան՝ փառքը մեր սիրելի Հայրենիքին, խորհրդային Հայաստանին:

Ա. ԿԱՊԵՆՑ

### ԼՈՒՍԱՒՈՐԻԶԸ

Փա՛ռք, օրհնութի՛ւն, երջանկութի՛ւն,  
Խորհրդային մեծ Միութեան  
Համհաւասար աշխարհներուն  
Մէկն անոնցմէ  
Հայաստանն է Խորհրդային:  
Թող աջն անտես կեանայ պաշտպան  
Անոր ամբողջ ձեռնարկներուն,  
— Մարդերն ընել ազատ՝ պետէն,  
Ու պակասէն սուրբ ցորենին:  
Մարդերն ընել իրար եղբայր  
Կրօնքին մէջն աշխատանքին.

.....

Քու սուրբ դերիդ, իմ ժողովուրդ,  
Մինչեւ ըլլան հողերն ոսկի,  
Յորե՛ններով ըզգեստաւոր,  
Ամէն թիգի:  
Ամէն բլուր նարօտ կապէ  
Ու ամէն ջուր՝  
Երակ՛երէդ, գովութիւնն իր  
Կապոյտ կապոյտ սահեցընէ,  
Դառնայ արծաթ  
Պայտաներուդ, հիւղակներուդ  
Պատէ՛ն վագոզ, գերդ մարգարիտն  
Հին հէֆիաթին:

## Հ. Մ. Ը. Մ. ԵՒ ԻՐ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

Մարմնակալ թանքի մարշի մէջ, մարդական փորձերը (վազել, ցատկել, նետել) ամենէն աւելի պարտաւոր եւ դանտնք ի դորձ դնելու համար ամենէն շատ կամքի ոյժ, յարատեւութիւն պահանջող մարդանքներն են:

Իբրք ալ մարդական խաղերը, ինչպէս Փութպօլ, պատքէթ պօլ, թէնիս եւ այլն, ինքնին հրատարակ մը ունին եւ երկտասարդուհիները որոնց աբեան մէջ բնութեան կայ արդէն Փիլիքական ճիւղեր պահանջող խաղերու հանդէպ սէրը, հաճոյքով կը մասնակցին անոնց: Մինչդեռ մարդական փորձերը միօրինակ են, մեծ հմայք մը չունին, առաւել կամ նուազ ճանճարացուցիչ են եւ անոնց միակ առաւելութիւնն է

Յառնեն ճայնէն կրուսկներուդ  
Բոլոր անոնք որ արիւնէդ  
Իբրեւ կարիլ օր մը ինկան  
Կեանքին լոյսին, ու շինեցին  
Համբիչը հուր քու պատմութեան,  
Քեզ օրհնարան՝ քու անցեալէդ  
Ու քեզ պատգամ՝ ապառնիքդ:

Ու դուն աղոր, ու դուն ազատ,  
Ու դուն հրգօր՝  
Չեռէդ երկարած քու հիւսիսի  
Մեծ պաշտպանին,  
Մոխիրներէդ իբրեւ փրկիչ,  
Մայր բախտաւոր,  
Առնես ծոցիդ քու զակրներդ  
Քու իսկ մատով հրաշակերտ  
Նոր Դրրախտիդ,  
Խորհրդային Հայրենիքին:

Սիրտն իմ աղբիւր մաղբանգներու,  
Դարեր վազող ու չըսպարող:  
Եղէք օրհնեալ, զացէք խաղաղ,  
Տուները ձեր, ողջ ու մեռել,  
Ապրեցնել արիւնք ձեր  
Յաւտեճէ մինչ յաւտեճան:

Յ. ՕՇԱԿԱՆ

(«Սիրտն»)

մարմնոյ միանելը բաշմակողմանի կէր -  
պով մարդիկ եւ մանաւանդ երկտասարդ -  
ներուն մէջ զօրացնել մարդական բարձր ու  
գին:

Արդարեւ ի՞նչ հաճոյք կրնայ ներկայացնել փորձ մը որուն միջոցին մարդիկ մը 10—20—50 անգամ կը կատարէ միեւնոյն շարժումը, այսինքն վազել, ցատկել եւ դուռտ, սկաւառակ կամ նիզակ նետել, ջանալով վերջ ի վերջոյ 1-2 երկվայրկեանով պահեսցնել կամ 1-2 սանդիմէթրով աւելցնել իր սովորական արդիւնքները:

Սոյն իրականութիւնը կը վերաբերի առհասարակ ամէն մարդիկի, ինչ աղբի ալ պատկանին ա՛նք: Եւ սակայն Հ.Մ.Ը.Մ.ի, այսինքն հայ մարդիկները, շատ աւելի զնահատելի պէտք է նկատել, որովհետեւ անոնց ճիւղերը զուտ դադարաւորական եղած են, եւ անոնց միակ իտէպը, եղած է ազնուացնել իրենց միաններն ու հողին, ու պատրաստել համբերատար, յարատեւ եւ չարքաշ սերունդ:

Կարծես Հ. Մ. Ը. Մ.ի «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» նշանարանը անոնց համար շինուած է:

Անոնք մինչեւ այսօր չեն ունեցած յոյսն ու հեռանկարը միջազգային ողիմպիական փորձերու մասնակցելու ու այսպէսով իրենց ցեղին արժէքը յայտնաբերելու յաշտ մարդկութեան:

Այս կէտը միշտ մտահոգած է Հ.Մ.Ը.Մ.ի վարիչները եւ ասկէ մօտաւորապէս 15 տարիներ առաջ, Հ.Մ.Ը.Մ.ի մարդական բաժնին ամենափայլուն շրջանին, երբ Ամսթէյտամի մէջ տեղի պիտի ունենային Միջազգային Ողիմպիական մրցումները, Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի շրջանի երկու ներկայացուցիչներ տեսակցութիւն մը ունեցան Միջազգային Ողիմպիական յանձնախումբի նախագահ Քոնթ տը Քուպէր-թէնի հետ, եւ բացատրեցին իրեն մեր պարագան: Ուշադրութեամբ մտիկ ըրաւ, եւ յայտարարելէ վերջ թէ ինք Հայ Ազգը զնահատող մը եղած է, խոստացաւ իր

կարելին ընել մեր մասնակցութիւնը յա-  
ջողցնելու համար Ամսթէրամի խաղե-  
րուն: Իժմախտարար երկրորդ տեսակցու-  
թեան մը մէջ ցաւով յայտեց թէ ժողո-  
վը առարկելով որ Հայ Ազգը չըլլալով պե-  
տական ինքնուրոյն ազգա՞ր, այլ մաս կազ-  
մելով Խորհրդային Միութեան, որ չի  
մասնակցեր Միջազգային Ողիմպիական  
փութերուն, անկախելի և կատած էր Հ.Մ.  
Ը.Մ.ի մարզիկներուն մասնակցութիւնը:

Ահա ուրեմն այս դուռն ալ կը դոցուէր  
հայ մարշիկին առջեւ, որ օրէնքով, ամա-  
նելով, տարիններով կը տքէէր, կը շար-  
չարուէր օտարին մարշադաշտերուն վրայ  
(չունենալով իր սեփական մարզադաշտը)  
իբր իտէալ ունենալով միայն իր ցեղին  
աղնուացման անհրաժեշտութիւնը, եւ ա-  
սիկա ի դէն խոշոր զոհողութիւններու:  
Որովհետեւ մարզիկ մը լաւ աշխուժներ  
ձեռք բերելու համար պէտք է հրաժարի  
չատ մը հաճոյքներէ, պէտք է ըլլայ ժուժ-  
կալ, չծխէ, ալքով չզոքածած է եւ ուշա-  
դրութիւն ընէ իր սնունդին ու քունին:

Եւ սակայն հակառակ այս բոլորին Հ.Մ.  
Ը.Մ.ի մարզիկները երկար տարիններու  
ընթացքին չեն կրցած հասնիլ միջազգային  
արժէք ներկայացնող չափանիշերու: Եւ  
յաճախ խորհած եմ թէ արդեօք այդ մար-  
զին մէջ հայ տղաքը անը՞դունա՞կ են:

Բարեբախտաբա՛ր ատեր հակառակը չու-  
տով ապացուցուեցաւ:


Մեր Արժանութիւնի մասնաճիւղին նրիտա-  
սարդ մարշիկուհի մը, օրիորդ Շահինեան,  
սեղուոյն Ամերիկեան բարձրագոյն վար-  
ժարանի ողիմպիական մրցումներու մէջ

առաջնութիւններ խեց վերջերս:

Իսկ մեր սիրելի հայրենիքին, Խորհրդա-  
յին Հայաստանի մէջ, սակաւաթիւ տարի-  
ներու ընթացքին յայտնուած են Մանուկ-  
եաններ, Նաւասարդեաններ եւ Համբար-  
ձումեաններ, որոնք ոչ թէ միայն Խորհր-  
դային Միութեան, այլ նոյն իսկ միջազ-  
գային չափանիշերու տեսակէտով կրցած  
են առաջ տկարի արդիւնքներ ձեռք բերել  
իսկ անոնցմէ մին, Համբարձումեան յա-  
ջողած է միջազգային չափանիշ մը կոտ-  
րել, ձախ ձեռքով վելցնելով 96 քիլօ  
ծանրութիւն:

Ուրեմն ինչ որ կը պակսէր Հ.Մ.Ը.Մ.ի  
աշխարհի չորս հովերուն ցրուած տարա-  
դիր հայ երիտասարդութեան միջազգային  
սպտուաւոր դիրք մը դրաւելու արժանի  
հայրենիք մը ունենալու համոզումը, յաջս  
աշխարհի միայն թափառական, զաղթա-  
կան ու անտէր ցեղի մը դաւակնները չըլ-  
լալու դիտակցութիւնն էր: Եւ այսօր այդ  
փոքր լեցուած է: Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկնե-  
րը այսքան տարիներու իրենց համեստ,  
անշուք եւ յարատեւ ջանքերէն վերջ, օղ-  
տուելով ներդաղթէն պիտի կարենան եր-  
թալ իրենց սիրելի Հայրենիքը, եւ հոն ի-  
րենց երկինքին տակ, իրենց մարզադաշ-  
տերուն հողին վրայ, իրենց աղղակիցիե-  
րուն խրախուսիչ ծափահարութիւններուն  
առջեւ պիտի շարունակեն մարզական փոր-  
ձելը, որպէսզի վաղը, կարենան սպտուա-  
ւոր կելպով բարձր բունել իրենց անմահ  
ցեղին պանծալի դբօր միջազգային Ողիմ-  
պիական խաղերու միջոցին:

ԺՊՏՈՒՆԻ



ՍԿԱՌԻՏԸ ՀՆԱԶԱՆԴ Է

ՈՐՊԷՍՁԻ ՍՈՐՎԻ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ ՅԱՐԳԱՆՔԸ՝  
ՅԱՆՁՆԵՑԷՔ ԶԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ  
Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ



ՀԱՅԿ ՃԻՉՄԷՃԵԱՆ, Հ.Մ.Ը.Մ.ի անվատ կիսմադիր-  
ներէն մէկը, որ կը պատրաստուի Հայաստան մեկնիլ:

Երբ Հ.Մ.Ը.Մ.ի չորս զիրերը կ'արտա-  
սանէ որեւէ անդամ կամ սկառւտ, անմի-  
ջապէս անոր կը միանայ Հայկին անունը.  
այսինքն Հ.Մ.Ը.Մ.ի Հայրէկը: Բախտը  
ունեցայ քսանեւհինգ տարի վերջ զինքը  
զրկելու եւ համբուրելու Եզիպտոսի մէջ  
Հոկտ. 13ին: Նոյն Հայկն էր, չէր փոխ-  
ւած. միայն մազերը ճեմկցած էին Արա-  
րատի գագաթին պէս: Նոյն եռանդը, նոյն  
ողին, միշտ երիտասարդ: Առաջին արձա-  
նագրուողն եղած էր Եզիպտոսի մէջ ՆՆՐ-  
ԳԱՂԹԻՆ:

«Հայկ անունը այստեղ չի վայելեր.  
Հայկ անունը Հայրենիքին համար է, հոն  
եթէ պէտք ըլլայ հողադուրծութիւն ալ  
կ'ընենք», ըսաւ ան:

Մեր բաժանումը, օղակայանին մէջ,

չատ յուղիչ էր. բայց երբ համբուրուե-  
ցանք, «մնաք բարով» բառը չնլաւ մեր  
բերէն, այլա ցը, յառաջիկայ տարի Ս.  
Հայաստանի մէջ:

Հայկը թող օրինակ դառնայ մեր բոլոր  
մարդ'կներուն, մեր Հ.Մ.Ը.Մ.ականնե-  
րուն: Հ.Մ.Ը.Մ.ի Հայրէկը ճամբան կը  
բանայ իրրեւ կարգապետ. միւսներուն կը  
մնայ հետեւիլ Հայրէկին:

Սերունդներ դաստիարակեցիր Հ.Մ.Ը.  
Մ.՝ դրօշին տակ. ցանած սերմերդ պա-  
րապ չեն դացած: Քու օրինակիդ հետե-  
ւող'եր շատ կան, որոնք իրենց երդումին  
այժէրը զիտեն, շարան շարան կը մեկնին  
հոն, Արարատի ստորոտը, իրենց երդումը  
կրկնելու, — բարձրացի՛ր, բարձրացո՛ւր,  
իրոհե տիպաբ քաղաքացիներ ծառայելու  
Հայրենիքին:

Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

# ՏԱՅ ՍԿԱՆՈՒՏ

## ՍԿԱՆՈՒՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

(Շարունակութիւն Աստուծոյ քիւն)

### ՆՇԱՆՆԵՐՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Երբ խմբապետ մը ուզէ հաւաքել իր խումբը, իր փողհարին հնչեցնել կուտայ սկառտտին կողմը:

Երջիկ խումբերու պետերը իրենց մարդիկը կը հաւաքեն սուլիչի հարուածով մը, որուն կը հետեւի խումբին կողմի կանչը: Յետոյ՝ «վա՛ղք, յառա՛ջ»-ով խումբը կ'առաջնորդէ մարդիչին քով:

### Սուլիչով նշաններ:

1 — Երկար սուլիւն մը — «Ուշադրութի՛ւն», «Լռութի՛ւն», «Միշտ պատրաստ»:

2 — Դանդաղ եւ երկարատեւ, իրարու յաջորդող սուլիւններ. — Մեկնեցէ՛ք, — Աւելի հեռուն գացէ՛ք, — Յառաջացէ՛ք, — Գիծը տարածեցէ՛ք, — ցրուեցէ՛ք:

3 — Իրարու յաջորդող, կտրուկ եւ արագ սուլիւններ. — Հաւաքուեցէ՛ք, — Տեղերնիդ...

4 — Ետեւէ ետեւ երկարատեւ եւ կտրուկ սուլիւններ, — Վտանդ կայ, — Ձգուշութի՛ւն...

5 — Երկար սուլիւնէ մը յետոյ՝ յաջորդական երեք կտրուկ սուլիւններ, — խմբապետը կը հաւաքէ իր շրջուն խումբերու պետերը:

Սուլիչով տրուած բոլոր հրամանները պէտք է անմիջապէս գործադրուին մարդական վաղքով, որքան կարելի է արագ վազելով, առանց նկատի առնելու թէ ի՞նչ կ'ընէք այդ միջոցին:

### Ձեռն-Քով ՆՇԱՆՆԵՐ

Երջուն խումբերու պետերը կրնան այդ նշանները տալ ի հարկին իրենց դրօշիկներով:

Բաղմաթիւ անդամներ ձեռքը շարժել աջ կամ ձախ եւ կամ դրօշիկը դէմքին բարձրութեամբ, կը նշանակէ, — Ո՛չ, — Հոգ չէ՛, — Ձիջեցէ՛ք:

Ձեռքը կամ դրօշիկը բարձրացնել պիտի բաղուկով, եւ անդադորէն զայն շարժել աջ ու ձախ, եւ կամ սուլիչը փչել քանի մը անդամներ յամբօրէն, կը նշանակէ, — Աւելի հեռուն, — Ցրուեցէ՛ք:

Ձեռքը կամ դրօշը վերցնել եւ արագ արագ զայն շարժել եւ կամ սուլիչի բաղմաթիւ հարուածներ տալ կարճ եւ արագ, կը նշանակէ, — Վերադարձէ՛ք, — Հոս եկէ՛ք:

Ձեռքը կամ դրօշը երկարել ուղղութեան մը վրայ, կը նշանակէ, — Հո՛ն գացէք:

Ձեռքը բանալ կամ դոցել եւ կամ դրօշը շարժել արագօրէն վերէն վար, քանի մը անգամ անընդհատ կը նշանակէ, — Վազեցէ՛ք:

Ձեռքը կամ դրօշը ուղիղ բռնել գլխուն վրայ, կը նշանակէ, — կեցէ՛ք:

Երբ պետը հրաման մը կ'արձակէ սկառտտի մը որ հեռուն կը գտնուի, բայց կը լսէ իրեն լսուածը, ձեռքը կը բռնէ գլխուն բարձրութեան վրայ: Եթէ չի լսեր, կը կենայ առանց որեւէ նշան ընելու:

Այն ատեն, պետը կը կրկնէ աւելի բարձր ձայնով կամ սկառտտին նշան կուտայ որ աւելի մօտենայ:

**ՆՇԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ**

Վարժութիւններ կատարւոցէք կրակ վառելու եւ ծուխի ու բոցի նշանները դործածելու:

Վարժուեցէք սուլիչով նշաններուն:

Մտքվեցուցէք Մորսի այրութեանը եւ դրոշախօսութիւնը:

Մրցումներ կաշմակերպեցէք որ տղաքը աւելի հնարամիտ դառնան նամակներ պահելու իրենց վրայ:



**ՊԵՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Որքան կարելի է, այնպէս մը ընել որ բոլոր տղաքը մասնակցին խաղերուն եւ մրցումներուն: Կարելորը մէկ քանի վարպետ տղաք հասցընելը չէ, այլ ամէն մէկը օգտակար ըլլալու շարք վարժեցնելն է: Պէտք է ուրեմն դանձր բոլորը վարժեցնել եւ բոլորը հասցընել դոհացուցիչ արդիւնքներու:

Այն մրցումներուն մէջ ուր տղաքը այնքան բաղմամբիւ են որ կարելի է խումբով դործել, իրարու դէմ հանեցէք կորսնցնողները եւ ոչ թէ շահողները, ինչպէս կ'ընեն սովորաբար, եւ նայեցէք թէ ո՞վ է ամենէն տկարը եւ ոչ թէ ամենէն զօրաւորը: Լաւերը պիտի շարունակեն նոյն եռանդով խաղալ, իսկ այս տեսակ մրցումի մը առաւելութիւնը հոն է որ նուազ ճարպիկներուն կուտայ աւելի վարժութիւն կատարելու առիթը:

**ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿԸ**

Սկսուտին կը յանձնէք նամակ մը, զոր պարտաւոր է տանի պաշարուած քաղաքի մը ընդհ. բանակատեղին (պաշարուած վայրը կ'ընայ ըլլալ քաղաք մը, զիւղ մը, ազարակ մը, կամ տուն մը):

Պէտք է որ սկսուտը պաշարուած վայրէն ներս մտնէ, վերագառնայ՝ հետը բերելով ստացադիր մը: Ուսին վայրն զնդասեղով բռնուած՝ դունսուոր 150 սանդիմնոց քուրջի կտոր մը կը կրէ: Մեկնակէտը՝ առնուազն 5 քիլօմեդր հետու պէտք է ըլլայ այն վայրէն ուր պէտք է երթայ:

Պաշարողները որ դայն կը լրտեսեն, կրնան կենալ ուր որ կուղեն, բայց թոյլատրուած չէ մօտենալու ընդհ. բանակատեղիին, որմէ առնուազն 300 մեդր հեռու կենալու են: (Օգտակար է որոշել սահմաններ որ բոլորին ծանօթ են, կամ կրնան դիւրաւ նշմարուիլ): Բոլոր անոնք որ այս սահմաններէն ներս կը գտնուին, իրաւարարին կողմէ կը յայտարարուին սպաննուած թշնամիին կողմէ եւ խաղէն դուրս կը հանուին:

Սուրհանդակը կրնայ ամէն խորամանկութեան դիմել, միշտ կ'ընծ կերպարանք չի կրնար ունենալ, բայց միշտ պէտք է որ իր կարմիր քուրջը կրէ ուսին վրայ:

Սուրհանդակին 10 ժամ միջոց կը տրուի պաշարուած քաղաքը մտնելով, նամակը յանձնելու եւ վերագառնալու ստացադրով: Թշնամին երեք կէտ կը շահի, եթէ բռնէ սուրհանդակը, եւ կը կորսնցնէ երեք կէտ, եթէ սուրհանդակը յաջողի:

Կարելի է նոյն խաղը կատարել քաղաքի մէջ, բայց դայն փոփոխութիւններու ենթարկելով, համաձայն պարագաներուն:



**ԺԱՄԱՆԱԿ ԵՆ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ Զ Ա Փ Ե Լ**

Սկսուտները վարժեցնելու համար որ ժամանակ եւ հեռաւորութիւն չափել սորվին, ամէն մէկը զրկեցէք տարբեր ուղղութեամբ մը՝ հետեւեալ հրամանով. — Երեք քիլօմեդր քաշեցէք գէպի հիւսիս -



արեւելք: Տեղեկագրի մը մէջ ճիշտ ու ճիշտ նկարագրեցէք ուր որ էք (եթէ կարելի է տեղադրակաւ ստուերագծով մը եւ զայն բերէք, անմիջապէս որ կարենաք:

Յետոյ, լաւ քարտէսի մը միջոցաւ, կամ տւրիչ որեւէ միջոցաւ, նայեցէք թէ ի՞նչ ուղղութեամբ եւ ի՞նչ հեռաւորութեան վրայ գացած է:

Սկսուտները զրկեցէք երկուական, մէկ խումբը իբր մրցորդ միւսին: Պէտք է մեկնին երկու տարբեր ճամբաներէ, հասնելու համար նոյն կէտին, որուն տանող ճամբան պէտք է գտնեն քարտէսին վրայէն: Բայց պէտք է նշանակուած տեղը հասնին, առանց իրենց մրցակիցներէն տեսնուելու:

Ժամանակի տեսողութիւնը չափելու համար, սկսուտները զրկեցէք տարբեր ուղղութիւններով, ամէն մէկուն յաճոյնով գրաւոր հրաման մը որ իրենց կը յայտնէ թէ որքա՞ն ժամանակէն պէտք է վերադարձա՞ն ըլլան, 7 վայրկեան, 10 վայրկեան, եւ այլն: Նշանակեցէք մեկնումի եւ վերադարձի ճիշդ ժամանակը: Սկսուտները պատուոյ խօսք կուտան որ ժամացոյցի չպիտի նային: Այս խաղը կը նայ կատարուիլ քաղաքի մէջ թէ դաշտի վրայ:

սին տեղեկագրի պէտք է տան: Պէտք է գրաւոր յայտնել՝

1 — Քա՛ւի՞ հողի կայ ամէն մէկ խումբին մէջ:

2 — Ի՞նչպէս հաղուած են, կամ ինչո՞վ կը ճանչցուին:

3 — Բաղդատմամբ տուեալ կէտի մը, ո՞ւր կը գտնուին:

4 — Ի՞նչ հեռաւորութենէ զանոնք տեսած են:

Սկսուտը յետոյ կը մեկնի դէպի միւս կէտը, եւ կը կրկնէ նոյն վարժութիւնը՝ ել կրող խումբին համար, յետոյ երրորդ խումբին համար:

Վե՛ջաց ելու համար, սկսուտը վաղելով կը վերադառնայ դէպի ժամանումի ձողը:

Ամէն մէկ ճիշտ նկարագրութեան համար պէտք է հաշուել 5 կէտ. առաւելագոյնը կը ըլլայ ուրեմն 15: Ժամանումի ձողը բերուած առաջին տեղեկագրին վրայ՝ ամէն մէկ 10 երկվայրկեան ուշացումի համար՝ մէկ կէտ կը ղեղջուի: Սխալներու կամ զանցառումներու համար կէտեր կամ կէս-կէտեր կը ղեղջուին:

Սկսուտներու վազք.—

(Շար.)

300էն 1200 մեղր հեռաւորութեան վրայ տեղաւորեցէք 3 հողի կամ 3 խումբեր, պայմանաւ որ ամէն մէկը կամ ամէն մէկխումբ իրարմէ զանազանութիւն տարբեր առարկայով մը, — զգեստով, դաւաղանով, թերթով, եւ այլն: Եթէ հոն ուրիշներ ալ կան, այս վերջիններուն պէտք է յատկանշական կեցուածք մը բռնել տալ, որպէս զի դիւրաւ դանաղանուին անցնողներէն, օրինակ՝ ծունր դնել եւ այլն: Պետր՝ այն ատեն կը նշանակէ, երեք որոշ կէտեր կտրող բոլորչի անցքի ճամբայ մը եւ եթէ կարելի է, կը պահանջէ որ մրցորդները մէկ քանի արդելքներէ ոստում կատարեն: Մրցորդները կը մեկնին, վաղելով դէպի թիւ 1ը: Հոն՝ իրաւարար մը ցոյց կուտայ թէ դէպի ո՞ր կէտը պէտք է ուղղուին գտնուելու համար այն խումբը, որուն ժա-



# ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ՋՈՒՐԸ

Բանակումի դիտաւորութիւն ունեցող սկաուտի մը համար ամենակարեւոր խնդիրներէն մին է ջուրի հայթայթման դժւարութիւնը: Սկաուտը իր բանակումի միջոցին պէտք ունի անընդհատ այդ հեղուկին, իր դանազան կարիքները գոհացնելու համար: Այդ նպատակաւ անհրաժեշտ է որ սկաուտ մը յաւ ճանչնայ ջուրը:

Ջուրը իր ծագումէն ու փիճակէն դատելով կարելի է երկու դասակարգի բաժնել: Հոսուն ջուրեր եւ կայուն ջուրեր:

Հոսուն ջուրերը իրենց կարգին կը բաժնուին երկու մասի, աղբիւրներ եւ գետեր:

Աղբիւրներ. — Աղբիւրի ջուրերը ամենամաքուրը եւ ամենալարմարն են խմելու համար: Անոնք ընդհանրապէս գտուած են երկտի դանազան խաւերուն կողմէ, որոնց մէջէն կը հոսին, եւ որոնք մաքրած են դանոնք իրենց աղտոտութիւններէն եւ մտանգաւոր մանրէներէն: Եւ սակայն աղբիւրի ջուրերուն մաքրութիւնն այ կախում ունի իրենց անդամ երկրի խաւերուն տեսակէն: Այսպէս եթէ այդ խաւերոյ փխրուն եւ աւազային են, անոնց մէջէն բոխող ջուրերը շատ աւելի մաքուր կ'ըլլան քան կրային ու ժայռոտ երկրամասերէն բոխող աղբիւրներուն ջուրերը: Լեռնային հողամասերը այս վերջին բնութիւն կը ներկայացնեն:

Գետեր. — Հոսուն ջուրերուն ուրիշ մէկ տեսակն են առուակներն ու գետերը: Ասոնք այ աղբիւրի ջուրերուն պէս կազմուած են անձրեւի ջուրերով, սակայն, փոխանակ ընդերկրեայ ճամբորդութիւն կատարելու, երկար միջոց կտրած են երկրի երեսէն, եւ այսպէսով իրենց ճամբուն վրայ, հաւաքած են ամէն տեսակ աղտոտութիւններ եւ մանրէներ: Որով բացարձակապէս անլարմար են իրրեւ ըմպելի կայուն ջուրերը իրենց կարգին կը բաժնուին երկու կարգի: Հորեր, եւ լճացած ջուրեր:

Հորեր. — Հորերը կարելի է նկատել արուեստական աղբիւրներ, որովհետեւ անոնք փորուած են երկրաբաններու ցոլցման քննելով վրայ որոնք երկրի խաւերուն

տակ գտնուող ջուրը քննելով խմելու յարմար նկատած են դայն, բայց այդ մաքրութիւնը խնդրական է, քանի որ յաճախ մօտը գտնուող աղբալիներու կամ արտաւայրերու պատճառաւ աղտոտութիւններ կը թափանցին երկրի խաւերէն ներսու կ'ապականեն դայն:

Լճացած ջուրեր: Այս ջուրերը բացարձակապէս անլարմար են իրրեւ ըմպելի գործածուելու. քանի որ իրենց բանօղեայ եւ կայուն վիճակը պատճառ եղած է որ աղտոտութիւններ ամբարեն եւ ճամբարի շտեմարաններ դառնան մանրէներու եւ մանաւանդ հիւանդութիւններ տարածող միջատներու հակիթներուն, որպիսին են մտեղները:


Ջուրի տեսակը. — Ըմպելի ջուրը պէտք է ըլլայ պաղ, վճիտ, առանց հոտի, առանց անախորժ համի, մանաւանդ թեթեւ ստամոքսին: Պէտք է նաեւ ըլլայ աննեխելի, օճառը դիւրաւ փրփրացնող եւ կերակուրները դիւրաւ եփող:

Ջուրի մը պաղութիւնը պէտք է ըլլայ 8-15 աստիճան: Սոյն ջերմութեան աստիճանը պէտք է որ ամառ ատեն ըլլայ օդին ջերմութենէն պակաս իսկ ձմեռ ատեն ա-

Շատ պաղ ջուրը յաճախ վտանգաւոր աղեցողութիւն ունի թոքերուն եւ աղիքներուն վրայ, յառաջ բերելով արիւնխառնում (congestion) կամ փորհարութիւն (diarrhée).

Ամանի մը մէջ երկար ատեն մնացած ջուրը եթէ հոտ կամ անախորժ համ մը ստացած է կամ թէ ամանին տակ մթերում մը գոյացած է, ատոր պատճառը այն է թէ ջուրին մէջ առկախ մնացած աղեր զոյութիւն ունին, ծծումբի, Փլորի, կամ մանեղզիումի աղեր: Ծովին մօտ գտնուող ջուրերը յաճախ կը պարունակեն քլորիւր տը Սօտիումի (խոհանոցի աղ) աղեր եւ անլարմար են խմուելու:

Ջուրին ամլացումը. — (Stérilisation) Սկաուտ մը պէտք է գիտնայ որ յաճախ երեսոյթով մաքուր եւ վճիտ ջուր մը կընայ բիւրաւոր մանրէներ պարունակելիս աղտոտ եւ կազմուածուած բուսական մաս-



նիկներ պարունակող ջուր մը կրնայ ան-  
 վնաս ըլլալ: Ուստի ջուրի մը տեսակը ո-  
 բոշելու համար պէտք է ճանչնալ շրջա-  
 կայքի հողերուն երկրաբանական կազմու-  
 թիւնը, ջուրին ծաղումը, եւ ուսումնասի-  
 րել տեղւոյն վրայ մտակայ շրջանը (ա-  
 դարակի, արօտավայրերու կամ աղբանոց-  
 ներու զոյութիւնը): Կարելի է նաեւ առ-  
 նել մտակայ բնակիչներու կարծիքները  
 առ ի տեղեկութիւն, առանց սակայն մեծ  
 կարեւորութիւն տալու անոնց, որովհե-  
 տեւ կրնայ պատահիլ որ բնակիչները եր-  
 կար վարժութեամբ պատուաստուած ըլ-  
 լան վտանգաւոր մանրէներ պարունակող  
 ջուրի մը, որ կրնայ աղիտարեր դառնալ  
 առաջին անգամ զործածողի մը: Ուստի  
 սկսուտ մը պարտաւոր է իր ձեռքին տակ  
 ունենալ պէտք եղած միջոցները ջուրերը  
 ամլացնելու, ամէն անգամ որ փոքր կաս-  
 կած մը կ'ունենայ անոնց մաքրութեան  
 մասին:

Ջուրը ամլացնելու բաղամթիւ միջոցներ  
 զոյութիւն ունին:

Անոնցմէ ամենապարզն ու ամենաթանն  
 է եռացումը: Եռացած ջուրը կարելի է  
 զործածել կերակուրներու պատրաստու-  
 թեան, որովհետեւ իր կազային մարմին-  
 ները կորսնցուցած ըլլալով ծանր է եւ դժ-  
 ւարամարս: Կարելի է անոր մասամբ կա-  
 զային մարմիններ եւ օդ ներմուծել երկար  
 ատեն գայն ձեծելով: Ջուրը եռացումով  
 ամլացնելու համար անհրաժեշտ է զայն  
 առնուազն 10 վայրկեան եռացնել:

Կան նաեւ քիմիական միջոցներ ջուրը  
 ամլացնելու: Այդ պարազային կ'օդաւ-  
 դործուին իօտի, բէնամանկանաթի, բոթա-  
 սիումի եւ քլօրի մանրէասպան յատկու-  
 թիւնները: Սոյն քիմիական բաղադրու-  
 թիւնները, կարելի է դոնել ղեղարաննե-  
 րու մէջ, հեղուկ կամ ղեղաճառ ձեւի տակ  
 եւ որոնց կցուած կ'ըլլան զբաւոր բացա-  
 տրութիւնները, անոնց զործածութեան ե-  
 դանակին մասին:

Իօտ պարունակող բաղադրութիւննե-  
 րէն ամենակարեւորներն են՝ Ա. Թէնթիւռ  
 տ'իօտ հեղուկ վիճակի մէջ, ուրկէ 5-6  
 կաթիլ պէտք է դնել մէկ լիթր ջուրի մէջ,  
 ցնցելոյն եւ 15 վայրկեան թողուլ: Թե-

թեւ անհաճոյ համ մը կ'ունենայ: Բ. Երեք  
 զոյնով ղեղաճառեր, կապոյտ, վարդա-  
 դոյն եւ ճերմակ (comprimés tricolore). Երե-  
 քը մէկ զործածելի: Հետեւելով ղեղաճա-  
 տերու կցուած բացատրութեանց:

Գ. Նոյնպէս կարելի է զործածել «վի-  
 վիեօտ»ի կամ «նովիեօտ»ի ղեղաճառներ:

Մանկանէզի բաղադրութիւններէն ամե-  
 նայարմարն է (Manganocolloid) կոչուած  
 ղեղաճառերը, որոնք զոյդ ղեղաճառեր  
 են, սեւ մը եւ ճերմակ մը, յաջորդաբար  
 զործածելի բոս ղեղերուն կցուած զործա-  
 ծութեան եղանակին:

Քլօրի բաղադրութիւններէն կան: Ա.  
 Հեղուկ վիճակի մէջ իբօքլօրիթ տր բօ-  
 թասիում (Eau de Javel) զործածելի 4-5  
 կաթիլ մէկ լիթր ջուրի մէջ, որ սակայն  
 անհաճոյ համ մը կուտայ ջուրին:

Որով ամենայարմարն են քլօրամին պա-  
 ռունակող ղեղաճառերը, որոնք ղեղարան-  
 ներու մէջ կը ծախուին «Onez» անուան

Իսկ վերջապէս ճարտար եւ հնարամիտ  
 սկսուտ մը, կրնայ ամէն տեսակ ջուրը,  
 մանաւանդ ծովուն ջուրը բմպէի դարձնել  
 թորումով (distillation), որ թէեւ դժուար  
 բայց հետաքրքրական ու սկսուտի մը վա-  
 յել է: Ատիկա կը կայանայ ջուրին չոզին  
 պաղեցնելով, մաքուր ջուր մը ձեռք բե-  
 րելուն մէջ, այսինքն արուեստական անձ-  
 րեւ պատրաստել: Ատոր համար հնարամիտ  
 սկսուտ կրնայ իր նախնական միջոցնե-  
 րով շինել թորիչ մեքենայ մը (alambic),  
 որ կը կայանայ ջուրը եռացնող լաւ գոց-  
 ուած ամանէ մը եւ բաւական երկար խո-  
 դովակէ մը (նախապատուութիւն տալով  
 դայարուած խողովակի մը) որուն մէջէն  
 չոզին կ'անցնի եւ պաղեւով կը մեղծուի  
 մաքուր ջուրի: Սողովակը կարելի է աս-  
 ղեցնել շուրջը թաց լաթ մը փաթեւով  
 եւ միշտ վրան պաղ ջուր թափելով: Ա-  
 կերպով ձեռք բերուած ջուրը թէեւ  
 քուր, բայց կազային մարմիններէ ու-  
 կ'ըլլայ որով անհրաժեշտ է ջուրը ձեծե-  
 լով անոր մէջ ներմուծել օդ եւ դանդաղ  
 կազային մարմիններ: Ուստի  
 հնարամիտ ու հանճարեղ սկսուտ մը բնա-  
 ծարաւէն չալիտի մեղմի, ուր ուս որոտ  
 նուէ:

ԵՄԱԳԱՅԸ

# ՊԷՏԸՆ ԲՄՈՒԼԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շարունակութիւն)

Պէտըն Բաուլ կորովի անձ մըն էր, կարչնեղ, առողջ կազմով, ինչ որ թոյլ տուաւ յաջողութեամբ գլուխ հանելու իրեն վըստահուած բազմաթիւ պաշտօններ, առանց իր պարտականութեան մէջ՝ նեղուելու եւ մատնուելու իր առողջական վիճակէն:

Ըսել չէ թէ երբեք հիւանդութիւն չճանչցաւ: Հնդկաստանի կլիման, իրեն ալ չխընայեց եւ ստիպուեցաւ Անգլիա վերադառնալ՝ երկար ատեն ապաքինելու եւ կազդուրուելու համար:

Այդքան միայն իր տկարութիւնը ծանր հետեւանքներ չունեցաւ:

Բայց այս արդիւնքին չէր հասած առանց ճիգի. պէտք է սակայն ըսել նաեւ թէ, իր շրջապատը, մանաւանդ իր մեծ եղբայրները, իրենց կարելին ըրեր էին, որ իրենց փոքր եղբայրը՝ կեանքի անհրաժեշտ վարժութիւններն ստանայ:

Մասնատրարար, անդրանիկ եղբայրը, մեծ հեղինակութիւն կը վայելէր ընտանիքին մէջ. որովհետեւ՝ նաւատորմին մէջ ծառայած էր. եւ վերադարձին՝ իր փոքր եղբայրներով կազմած էր նաւատորներու խումբ մը, որուն, բնականաբար, նաւապետ նշանակած էր ինքզինքը:

Ու նաւապետը, կրնաք վստահ ըլլալ թէ վախկոտ մէկը չէր: Հաճոյք կը զգար նաեւ նաւատորներ առաջնորդելով հոն ուր ծովային... յուղումներ կարելի էր ճանչնալ եւ նոյն իսկ փոթորկոտ ժամանակ, չէր վախնար բացերը ելլելէ:

Փոքր նաւու մը վրայ, օր մը, Բաուլ եղբայրները ծովային արշաւի մը մեկնեցան. իրր խումբին անդրանիկը Պէտըն Բաուլ նշանակուած էր նաւատորի եւ խոհարար:

Սոհարարի պաշտօնը յաճախ, նման պարզաներու մէջ, կրնայ անհաճոյ ըլլալ, մանաւանդ նաւու մը վրայ, ուր հաւաքուած են ախորժակ ունեցող եւ պահանջկոտ կտրիճներ:

Պէտըն Բաուլ, իր կարելին ըրաւ իր մեծ եղբայրները դո՛ւ ձգելու համար. բայց այն ատեն տակաւին, իր խոհարարական գիտութիւնը տարրական էր եւ անկատար: Զէր գիտեր իսկ թէ ապուր պատրաստելու համար, պէտք է աւելի շատ ջուր դործածել, քան նիւթը որ մէջը կը դրուի, բրինձ, բանջարեղէն, եւայլն, եւ թէ, առանց այս տարրական գիտելիքին, կրնայ ըլլալ որ ապուրը փոխուի տեսակ մը խաւճի, անհամ եւ անհրապոյր, փակի սանին յատակը եւ նոյնիսկ այրածի համ ու հոտ տայ:

Ինչ որ պատահեցաւ ալ, ի մեծ դայրոյթ նաւատորներու խումբին, Պէտըն Բաուլի մեծ եղբայրներուն, որոնց հրամանատարը, անդրանիկ եղբայրը, դատապարտեց մեր անճարակ խոհարարը՝ միս-մինակն ուտելու իր եփածը:

Օր մըն ալ, իսկական վտանդ մը անցուցին: Բաուլ եղբայրներու նաւը, հոսանքէն մղուած, խութի մը զարնուեցաւ եւ կեցաւ եւ հետզհետէ ուռող ալիքներուն մղումէն, սկսաւ աջ ու ձախ տատանիլ:

Նաւատորները սակայն, չկորսնցուցին իրենց պաղարիւնը, եւ ամէն մէկը, հնազանդելով նաւապետին հրամաններուն, իր կարելին կ'ընէր, նաւը փրկելու համար վտանգաւոր կացութենէն:

Բայց կացութիւնը երթալով կը վատանար, հակառակ տղոց յուսահատական ջանքերուն: Նաւը որ կարծես, պարանով մը կապուած էր խումբին, մէկ քովին պառկեցաւ, ճգնաժամային կացութեան մը մատնելով տղաքը:

Պէտըն Բաուլ, պատմած ատեն, չէր ծածկեր թէ վախով ու սարսափով լեցուած էր այդ պահուն, երբ մեծ ուրախութեամբ նշմարեց նաւ մը որ կը մօտենար իրենց, օգնութեան փութալու համար: Փրկութիւնն էր:

Բայց, «նաւապետը» ծանօթ էր ծովային կանոններուն, որոնք ազատարարին թոյլ կուտան փրկապիւն պահանջելու. ու

տնտեսագիտական... նկատումներով կ'ուզէր՝ փրկարար նաւը չհասած, իր նաւն ու իրենները փրկել՝ տղոց օժանդակութեամբը:

Սակայն, կարծես, այս տեսակ որոշման մը դէմ բողոքելու համար ըլլար, նաւը մէկ քովին պառկեցաւ բոլորովին՝ խութին վրայ: Պէտքն Բաուլ իր անկիւնը կծկրտած, սարսափահար, աչքերը փակած, չտեսնելու համար զարհուրելի տեսարանը, կը սպասէր անխուսափելի եւ չարաշուք վերջաւորութեան, երբանդրանիկը, զինքը կոպտօրէն մշտելով, հրամայեց մասնակցիլ փրկութեան աշխատանքներուն:

Շատ չանցած, շնորհիւ բոլորին միացեալ ճիղերուն, նաւը շտկուեցաւ եւ յաջողեցաւ շարունակել ճամբան:



Պէտքն Բաուլ կը սիրէր յաճախ յիշել այս արկածը, որմէ եղբակացութիւն մը եւ դաս մը կը հանէր (այս ալ իր նկարագրին մաս կը կազմէր. իր անձնական փորձառութիւններէն դասեր հանել, որպէսզի ուրիշներն ալ օգտուին ի հարկին):

— Այն պահուն, կ'ըսէր, երբ կը տեսնէք թէ սարսափի պիտի մատնուին, պէտք է ցնցէք ձեր մարդիկը, անոնց հրամայելով կատարել շատ պարզ, նոյն իսկ աննշան բան մը, բայց յստակ, որոշ բան մը: Այս կերպով, անոնք ժամանակ չեն ունենար որ իրենց միտքը վախէն կաշկանդուի:

Միայն իր եղբայրներուն հետ չէր որ Պետրն Բաուլ առիթն ունեցաւ շփումներ ունենալու...

Ահա միջադէպ մը, որ տեղի ունեցաւ Ձերթրհատուղի մէջ, ուր, Պետրն Բաուլ դպրոց կը յաճախէր իրր զիշերօթիկ եւ որ ցոյց կուտայ թէ ի՞նչպէս տնօրէնը կ'ըմբռնէր կեանքը:

Ձերթրհատուղի դպրոցին աշակերտներուն եւ շրջակայքի աշակերտ-մսագործներուն միջեւ բացայայտ թշնամութիւն կը ախրէր երկար ատենէ ի վեր: Ոչ ոք զիտէր թէ ի՞նչ էր այս հակառակութեան պատճառը: Ամէն անգամ որ աշակերտները Ֆութպօլ խաղալու համար դաշտ կ'ել-

էին, մսագործ աշակերտներն ալ կ'երթային մօտի դաշտը զբաւելու խմբովին...

Հետեւանքը կ'ըլլար այն որ խաղացողները իրենք զիրենք կը գտնէին քարի կամ աղիւսի կտորուանքի տեղատարափի մը տակ, որուն կը պատասխանէին նոյն ձեւով:

Երկու կողմի փոքր տղաքը չէին մասնակցեր այս կռիւներուն, այլ կը դոհանային կազմելով հանդիսատեսներու խումբեր, որոնց տակաւին պաշտօն չէր սերուած հարուած տալ եւ ստանալ, այլ միայն « համբել » հարուածները, ինչ որ կ'ընէին խղճմտութեամբ, բայց նաև խանդավառութեամբ կամ անձկութեամբ, ըստ կուռի ստացած երեւոյթին:

Օր մը, մինչ Պետրն Բաուլ, կը գտնուէր հանդիսատեսներու շարքին մէջ, կուռին դրուազներուն հետեւելով, անձկութեամբ, յանկարծ նոր մէկու մը ներկայութիւնն զգաց իր քովը:

Գլուխը դարձուց եւ սարսափով տեսաւ իր տնօրէնը որ հոն եկած էր կուռին աղմուկէն մղուած: Եկեր էր տեսնելու թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ:

Ի՞նչ պիտի ընէր. ի՞նչ պիտի ըսէր:

Այս հարցերը կը տանջէին փոքրիկն Բաուլի միտքը: Պատ մը իրարմէ կը բաժնէր հակառակորդները: Պատը այնքան բարձր չէր որ արդիւր իրարու դէմ նետուած քարերը: Բայց լուրջ արդելք մը կը կազմէր կուռուղներուն առջեւ, որոնք չէին կրնար անկից անցնիլ միւս կողմը, առանց վտանգուելու: Կուռին վերջաւորութիւնը անորոշ կը թուէր:

Այս պահուն էր որ տնօրէնը՝ ծռելով Բաուլի ականջին ըսաւ.

— Կը կարծեմ որ, եթէ կարենաք անցնիլ պատին վրայի այս փոքր դռնէն, հակառակորդին ճիշդ կողէն կրնաք հարուածել:

— Այո՛, պարո՛ն, բայց բանալի չունինք, պատասխանեց Բաուլ:

— Ահա, բանալին, ըսաւ տնօրէնը, պարզ կերպով, զայն տալով Պետրն Բաուլի, որ վաղեց դուռը բանալու իր ընկերներուն առջեւ, որոնք յաղթանակը տալին:

## ՀԱՅ ՍԿԱՌԻՏԸ ԿԸ ՍԻՐԷ ԻՐ ԱԶԳԸ

### ԵՒ ԿԸ ՍԵՐՏԷ ԱՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

**Règne de Tigrane II le Grand. — Lucullus et Pompée en Arménie. — Division du pays par les Romains. — Les derniers rois de la dynastie d'Artaxias.**

Jusqu'au début du premier siècle avant notre ère, les Arméniens n'avaient encore rencontré, sur les champs de bataille, que des peuples asiatiques, puissants, il est vrai, mais dépourvus de cette organisation et de cette discipline qui font la principale force des armées. Accoutumés eux-mêmes aux principes orientaux, que l'influence hellénique et la conquête alexandrine n'avaient pu déraciner, gouvernés suivant le régime féodal, comme les Perses, ils levaient leurs troupes par contingents, et dont l'obéissance envers le pouvoir royal n'était pas toujours ce qu'elle eût dû se montrer pour le bien de la nation. Mais, parmi les Parthes, les souverains du Pont, tous les roitelets de l'Asie, et chez les Séleucides eux-mêmes, l'inexpérience administrative et militaire était la même qu'en Arménie ; aussi le peuple arménien fut-il à même de lutter, souvent avec grand succès, contre ceux de ses voisins qui cherchaient à lui en imposer.

Dès l'époque de Tigrane le Grand, les éléments en présence changèrent de valeur, par l'entrée en scène des légions romaines. A nombre égal, la résistance des Asiatiques devenait illusoire, et la grande République, confiante dans ses généraux, dans ses diplomates et dans la force de ses armes, emploiera tour à tour sa puissance militaire et son habileté politique pour se rendre maîtresse de cette forteresse naturelle qui dominait l'Asie Antérieure, d'où il était aisé de menacer en même temps la Médie, la Syrie et le Pont. A la première occasion, les généraux romains prendront donc, sans attendre, le contrepied de ce qu'avait été jadis la politique des Achéménides, de ce qu'était alors celle des Parthes, de ce que sera plus tard

celle des Sassanides, des Arabes et des Turcs. La possession de l'Arménie sera disputée pendant des siècles, et les Arméniens subiront des influences diverses, qui, souvent, en partageant leurs tendances, causeront des désastres. Les uns, parmi les seigneurs, se montreront favorables aux Perses, les autres portés vers les Romains et beaucoup d'entre eux oublieront trop souvent, hélas ! les intérêts primordiaux du trône et de la nation.

#### **Artavazd II v. 112 av J.-C.**

Pendant qu'Artavazd II, vers 112 av. J.-C., régnait sur l'Arménie, son voisin, le roi du Pont, Mithridate V le Grand, étendait, par ses conquêtes, les frontières de ses Etats. Comprenant toute l'étendue du danger que causerait un jour à son royaume le voisinage des nouvelles possessions romaines, ce prince rêvait de fonder un vaste empire capable de lutter avec succès contre les généraux de la République. Le sang des Achéménides, qui coulait dans ses veines, lui inspirait la pensée de rendre à l'Asie sa splendeur et sa puissance d'antan, mais il comprenait une Asie hellénisée résumant en elle non seulement les vieilles traditions orientales, mais aussi la culture grecque, que l'Occident menaçait alors de la ruine. Profond politique, il prévoyait déjà cette scission qui se produisit plus tard entre Rome et Byzance, entre l'Occident et l'Orient. En sept ans au plus, Mithridate avait ajouté à ses Etats la Colchide, les côtes du Pont-Euxin, la Chersonèse Taurique et une partie de l'Arménie. Mais, quand il voulut s'étendre à l'orient de l'Euphrate, il fut arrêté, de ce côté, par la vaillance des Arméniens des peuples caucasiens ligués pour la conservation de leur patrimoine. Vers l'est, le royaume de Mithridate ne dépassa jamais le col du Souram, et les habitants des vallées du Cyrus et de l'Araxe, ainsi que ceux du plateau d'Erzeroum, conservèrent leur indépendance. Ces pays

se trouvaient être partagés en une foule de petits royaumes, de principautés, de seigneuries, dont les maîtres, très belliqueux, ne supportaient aucune autre autorité que leur bon plaisir. Dans la Transcaucasie et dans les montagnes, les peuplades très barbares encore, toujours en guerre contre leurs voisins, contre les Arméniens, s'étaient groupées. Il faudra la puissance de Rome pour les subjuguier nominale-ment un jour.


Telle était la situation politique du nord de l'Asie Antérieure, à l'époque où Tigrane II, dit le Grand (94-54 av. J.-C.), monta sur le trône de l'Arménie. C'est alors que s'ouvre la période militaire la plus glorieuse de toute la vie de cet Etat.

Jeune encore, Tigrane avait été jadis remis comme otage entre les mains des Perses, et c'est par la volonté du roi parthe Mithriade II qu'il obtint la couronne. Le Roi des rois, d'ailleurs, lui fit payer cette faveur par l'abandon de soixante-dix vallées des Etats d'Artavazd II.

Avec les débuts du nouveau roi commence

l'histoire positive de l'Arménie, car les dires des écrivains chrétiens indigènes, malheureusement, hélas ! trop souvent sujets à caution, seront désormais contrôlés par les nombreux documents que nous fournissent les auteurs grecs et latins. Quant aux annales de l'Arménie païenne, qui, sans aucun doute, ont existé soit en langue grecque, soit en pehlevi, elles ne nous sont pas parvenues.

Le roi du Pont, Mithridate, comprenant que jamais il ne parviendrait à soumettre les Arméniens et qu'il était très dangereux pour sa cause d'avoir Tigrane comme voisin, si ce prince n'était pas son allié, avait tout mis en œuvre pour entraîner l'Arménie dans la guerre contre Rome, et Tigrane, auquel le Pont avait abandonné la possession de tout le sud de l'Asie, considérait cette alliance comme devant assurer à ses Etats une situation telle qu'il pût traiter d'égal à égal aussi bien avec les Romains qu'avec les Arsacides de Perse. Aussi se décida-t-il à partager les vues et les périls de Mithridate.



ՄԱՐՍԷՅԻ. — 15-8-46ի սկաուտական բանակումի պետ ՊԵՐՃ ՖԵՐՀԱՏԵԱՆ



(Շարունակութիւն)

ՊԱՏԻՃ .—

ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐՈՒԱԾ .—

Հատուցման հարուածը կը տրուի հատուցման կէտին: Հարուածը տրուած միջոցին բացի հարուածը տուողէն եւ հակառակորդ բերդապահէն, միւս բոլոր խաղացողները պէտք է զանուիին հատուցման մակերեսէն դուրս, այլ սակայն խաղադաշտին վրայ, եւ հատուցման կէտէն առնուողն 9 մէթր 15 հետու:

Հակառակորդ բերդապահը պարտաւոր է կենալ իր բերդի գիծին վրայ, բերդի ձողերուն միջեւ, առանց ոտքերը շարժելու, մինչեւ որ հարուածը տրուի:

Հարուածը տուող խաղացողը պարտի դնդակը հարուածել ղէպի յառաջ եւ պէտք չէ որ կրկին դարնէ դնտակին, մինչեւ որ ուրիշ խաղացող մը չի դալի անոր: Գնտակը խաղի մէջ կը նկատուի անմիջապէս որ ոտքի հարուած մը ստացած է եւ առնուողն իր շրջագիծին շափ յառաջացած: Կարելի է ուղղակի կէտ մը նշանակել հատուցումի հարուածով:

Եթէ հատուցման հարուած կը տրուի խաղի կէտին կամ ամբողջութիւնը լրանալէն անմիջապէս յետոյ, նշանակուած կէտը ի դորու է եթէ դնտակը բերդէն ներս մտնելէ առաջ դալի պաշտպանող բերդապահին:

Եթէ պէտք ըլլայ խաղին կիսուն կամ ամբողջութիւնը լրանալէն յետոյ ժամանակը կ'երկարաձգուի, հատուցման հարուածը տալու համար:

Ա.— Հակառակորդ խաղացողներէն միոյն այս օրէնքներուն հանդէպ անաստուծի պարագային հատուցման հարուածը կը վերսկսուի եթէ կէտը չէ նշանակուած:

Բ.— Հարուածը տուողէն դատ, յարձակող խաղացողներէն միոյն սոյն օրէնքներուն հանդէպ անաստուծի պարագային, հատուցման հարուածը կը վերսկսուի եթէ կէտը նշանակուած է:

Գ.— Գնտակը հարուածձողին կողմէ դործուա սխալի մը պարագային, ազատ հարուած մը կը տրուի հակառակորդին կողմէ յանցանքը դորուած կէտին վրայէն:



ՔՈՎՐՆՏԻ ԳԻՄԷՆ ՆԵՐՍ ՆԵՏԵԼ.— Երբ դնտակը դուրս ելած է քովընտի գիծէն, ըլլայ գետնէն գլտորելով, ըլլայ օդին մէջէն, դաշտին մէջ կը նկատուի դուրս ելած կէտին վրայէն սեւէ ուղղութեամբ եւ դայն դուրս նետող կամ վերջին անգամ անոր գպող խաղացողին հակառակորդներէն միոյն կողմէ: Գնտակը դաշտին մէջ նետող խաղացողը, նետած վայրկեանին, ղէմքը պէտք է դարձուցած ըլլայ դաշտին, կեցած ըլլայ քովընտի գիծին վրայ կամ դուրսը, եւ դնտակը երկու ձեռքերով բռնած գլխուն վրայ բարձրացնելով նետէ: Նետուած վայրկեանէն խսկ դնդակը



խաղի մէջ կը նկատուի, բայց գնտակը նետողը իրաւունք չունի երկրորդ անգամ զարնելու մինչեւ որ ուրիշ խաղացող մը չդպի անոր:

Քովընտի գիծէն նետուած գնտակով ուղղակի նշանակուած կէտ մը ընդունելի չէ:

ՊԱՏԻԺ.— Ա.— Եթէ գնտակը վերոյիշեալ օրէնքներուն համաձայն ներս չի նետուի քովընտի գիծէն, հակառակորդ խաղացող մը պէտք է սկսի գործողութիւնը:

Բ.— Եթէ քովընտի գիծէն գնտակը ներս նետող խաղացողը երկրորդ անգամ դպի գնտակին, անուղղակի ազատ հարուածի մը իրաւունքը կը տրուի հակառակորդ կողմին, սխալը գործուած կէտին վրայէն:

ԲԵՐԳԻ ԷԱՐՈՒԱԾ.— Երբ գնտակը վերջին անգամ յարձակող խումբի խաղացողներէն մէկուն դպելէն յետոյ բերդի գծէն ամբողջութեամբ դուրս կ'ելլէ, առանց բերդի ձողերուն մէջէն անցնելու, կը նկատուի խաղէն դուրս ելած: Այն ատեն գնտակը կը տրուի դուրս ելած կէտին ամոնամօտ, հատուցումի մակերեսին առջին կէտին մէջ, եւ ոտքով ուղղակի կը նետուի խաղին մէջ, այսինքն հատուցումի գիծէն անդին, պաշտպանողներէն մէկուն կողմէ: Հարուածը տուող խաղացողը, իրաւունք չունի երկրորդ անգամ գնտակին զարնելու, մինչեւ որ ուրիշ խաղացող մը չդպի անոր: Բերդապահը իրաւունք չունի բերդի հարուածի ատեն, ձեռքերով առնել գնտակը, խաղին մէջ նետելու համար:

Եթէ գնտակը հատուցումի գիծը չէ անցած, այսինքն ուղղակի խաղին մէջ չէ նետուած, պէտք է հարուածը վերսկսի:

Բերդի հարուածով մը ուղղակի նշանակուած կէտ մը նկատի չառնուիր:

Բերդի հարուածի միջոցին հակառակորդները պէտք է գնտակէն առնուազն 9 մէթր 15 հետու գտնուին մինչեւ որ հարուածը տրուի:


ՊԱՏԻԺ.— Եթէ բերդի հարուածը տուող խաղացողը երկրորդ անգամ զարնէ գնտակին, երբ ան հատուցումի գծէն անցած է, առանց սպասելու որ ուրիշ մը դպի անոր, հակառակորդ կողմին կը տրուի անուղղակի ազատ հարուածի մը իրաւունքը, սխալը գործուած կէտէն:

ԱՆԿԻՆԻ ՀԱՐՈՒԱԾ.— Երբ գնտակը վերջին անգամ պաշտպանող խումբի խաղացողներէն մէկուն դպելէն յետոյ բերդի գծէն ամբողջութեամբ դուրս կ'ելլէ գետնին վրայէն կամ օդին մէջէն առանց բերդի ձողերուն մէջէն անցնելու, անկիւնի հարուած մը կը տրուի, այսինքն, յարձակող խումբի խաղացողներէն մին, գրնտակը դուրս ելած կէտին ամենամօտ անկիւնի դրօշին շուրջ գծուած քառորդ շրջանակին մէջէն գնտակը կը հարուածէ: Անկիւնի դրօշակը եւ ոչ մէկ պատճառաւ պէտք չէ տեղէն հանել: Անկիւնի հարուածով կարելի է ուղղակի կէտ մը նշանակել: Հարուածը տուողին հակառակորդները պէտք է առնուազն 9 մէթր 15 հետու գտնուին գնտակէն մինչեւ որ գնտակը խաղի մէջ նկատուի, այսինքն իր շրջագծին չափով յառաջանայ: Հարուածը տուողը իրաւունք չունի երկրորդ անգամ գնտակին դպելու մինչեւ որ ուրիշ խաղացող մը չի զարնէ անոր:

ՊԱՏԻԺ.— Սոյն օրէնքին անսաստման պարագային հակառակորդին կը տրուի անուղղակի ազատ հարուածի մը իրաւունքը, յանցանքը գործուած կէտէն:

(Շարուակելի)





ԱՅՅ ՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՐԱՆՍՍՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒՆ

Նոյեմբերի վերջերք, Հ.Մ.Ը.Մ.Ի Առժ. Կեդր. Վարչութեան որոշումով, Միութեան Շրջանային Բ. Պատգամաւորականէն առջ, թուրքիկ այց մը կատարուեցաւ Ֆրանսայի շրջանին եւեք ենթաշրջաններուն եւ մօտ 40 Մասնաճիւղերուն :

Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆրանսայի շրջանը, վարչական դիւրութեանց համար, բաժնուած է երեք ենթաշրջաններու, որոնք են.

Ա. Պուշ տիւ Ռօնի ենթաշրջան (Մարսէյ)

Հետեւեալ խմբաւորումներով՝

- 1.— Նիս, 2.— Քան, 3.— Մարսէյլ քաղաք, 4.— Լա Քապիւսէլ, 4bis — Տրակինեան, 5.— Պուլլիւար Օտտօ, 6.— Սէն Ժիւլիէն, 7.— Պօմօն, 8.— Քամբաներ Ֆրէզ, 9.— Սէնթ Մարկըրիթ, 10.— Սէնթ Ան, 11.— Սէնթ Անթուան, 12.— Էքս-ան-Բրօվանս, 13.— Կարտան, 14.— Սէն Ժէրօմ, 15.— Սէն Լու եւ 16.— Լասիօթա :

Բ. Ռօն, Իզէր, Տրօֆի ենթաշրջան

Հետեւեալ խմբաւորումներով.

- 17.— Լիոն քաղաք, 18.— Տէսին, 19.— Վիէն, 20.— Բօնտէվէք, 21.— Վալանս, 22.— Կոլմուլլը, 23.— Սէնթ Էթիէն, 24.— Սէն Շամօն, 25.— Սէն Մօռիս, 26.— Բօնտը Շէպիւ, 27.— Ռօան, 28.— Ռօման :

Գ. Սէն, Սէն Է Ուազի ենթաշրջան

(Փարիզ)

- 29.— Փարիզ քաղաք, 30.— Պէլլէլ, 31.— Պուա Գոլոմպ, 32.— Ալֆօրվէլ, 33.—

- Աննուվիլ, 34.— Իսսի, 35.— Իթալի, 36.— Լիլա, 37.— Վենսէն, 38.— Քաշան, 39.— Շաւիլ, 40.— Անկէն, 41.— Մէտտօն, 42 Սելուր, 43.— Ռէնսի :

Վերոյիշեալ Մասնաճիւղերէն մէկ քանին, թէպէտ եւ նախապէս դոյութիւն ունեցած են, ներկայիս վերակազմութեան համար, նախնական աշխատանքներ կը տարուին Պատգամաւորականի մասնակցութեան առթիւ :

Մեր այցը սկսաւ Ա. ենթաշրջանէն : Հոգ մեր ազգակիցներու թիւն է 25.000 : Տրամարանօրէն պէտք է ունենայինք նըւազազոյն 2500 անդամներ, իրականութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի մարզիկ թէ սկսուտներու թիւն է 850 հոգի :

Ինչպէս ամէն տեղ, Ազգ. թէ կուսակցական կազմակերպութիւնները չեն հասկըցած որ Հ.Մ.Ը.Մ.Ին ներս, բարոյական փրկիական, ընդհ. դաստիարակչական եւ Ազգ. հայրենաշունչ գործունէութիւն մը միայն կարելի է : Հ.Մ.Ը.Մ. եւ Սկաուտիզմը, իր կանոնագիր ծրագրով, Սփիւտի մէջ, ո՛չ մէկ Ազգ. կազմակերպութեան կամ կուսակցութեան բարկուած կամ հովանաւորուած է : Այդ կարելի է, մի եւ միայն, ազգային-պետական եղանակով :


Վերջերս, Առժմ. Կեդր. Վարչութիւնը, հայրենաշունչ ճիղով մը, շողեպինդ դարկ տուած է Միութեանս վերելքին, 1918ին նման, բոլոր այլազան մարդկան Միութիւններ ի մի ձուլելու եւ կազապարելու Հ.Մ.Ը.Մ.Ի մէջ : Առ այդ գրած է Ֆրանս.

չըջանի ենթաշըջաններուն եւ Մասնաճիւղերուն :

Մեր այցելութիւնը զուգադիպեցաւ տեղւոյն սկսուտական երգման արարողութեան, որ տեղի ունեցաւ 25 Նոյ. 46-ին, Բրատսոյի Մայր Եկեղեցին, ի ներկայութեան Ենթաշըջաններու ղեկավարներուն, ծնողներուն եւ հոգեւոր հովիւին : Կ'արժէր տեսնել Գայլիկներու վոճճակը, Սկսուտներու խումբը եւ Կայտերու փունջը : Մաքուր, կոկիկ, ճաշակաւոր, կարգապահ : Արարողութեան ժամը հնչեց, եւ խմբակ-խմբակ, իրենց աջ ձեռքը երկարած Սրբ. Խաչին, Սրբ. Աւետարանին եւ Մասինս ու Արարատը ներկայացնող Հ.Մ. Ը.Մ. ի Սկսուտական դրօշին, հատիկ հատիկ, վստահ ու անվարան, կ'արտասանէին՝ «Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել Հայրենիքի» : Եւ մայրիկներ, մամիկներ, ծերունի մեծ հայրեր արցունքը աչքերնուն, հպարտ եւ ժպտադէմ կը մտածէին հիմա, ա'լ կը հաւատանք Աստուծոյ եւ Հայնիքին, եւ սիրով է որ պիտի մեկնինք այդ, դարերէ ի վեր

կորած Հայրենիքը, ուր խինդ ու ծիծաղ, երգ ու աշխատանք իրար կը լրացնեն : Երգման արարողութենէն վերջ, խօսք առին տեղւոյն հոգեւոր հովիւը, սկսուտ խմբապետը եւ Կեղերոնի ներկայացուցիչը : Պուշ տիւ Ռօնի կազմին վրայ, Պոմօնի սկսուտական խումբը, որուն պատասխանատու նշանակուեցաւ փ. խմբապետ եղբ. Ա. Շիրինեան : Ներկայիս տեղւոյս Սկսուտական Խորհուրդը, դիւսաւորութեամբ եղբ. Մ. Փափաղեանի, զօտեպինդ աշխատանքի է լծուած, «դատրի» պատրաստութեան, որուն պիտի յաջորդէ, դարնան, հաղարեակ մը Սկսուտներու շարքերը, այդպէսով, մրցակցութեան մտնելու Սէն եւ Սէն է Ուազի (Փարիզ) ենթաշըջանին հետ :

Գալով մաքրական ճիւղին, աթլէթիզմը յառաջիկայ դարնան խոկ կը վերածնի : Իսկ Փութպօլի 25ի հասնող տասնեակները, իրենց յարակից դասաւորումներով, քանիցս շահած են բաժակներ եւ իրենց կարգին հայ անունը, որ ըստ օրէ սիրցընելու եւ պանծացնելու վրայ են : Պուշ տիւ



ՄԱՐՍԷՅԻ. — Սկսուտական բանակում (15-8-46)

Ռօնի գլխաւոր պահասն է, միութենական դաշտի եւ ահուճրի չգոյութիւնը: Բան մը, որ ներկայ վարչութիւնը խոստացած է ի դուրս հանել. առ այժմ տեղական Սէն Ժիւլիէնի դաշտը կը դարձածուի Ֆրանսացիներուն հետ, եղբայրբար:

Յառաջիկայ դարձան Պուշ տիւ Ռօնի Ենթաշրջանը Մարդիկներով թէ Սկաուտներով, հսկայ աշխատանք ունի տանելիք, ներդադրի կարաւաններուն հոգատարութեան առթիւ:



Անցինք Ռօն, Իզէր եւ Տրօմ:

Հոս սկաուտական կազմը, զեռ շատ հետու է գոհունակութիւն պատճառելէ, ըսել չէ թէ զոյութիւն չունի: 12 մասնաճիւղերու մէջ, մէկ խումբ միայն ունինք, Վիէնինը: Լիօն եւ Տեսին որոնք կարող են 200ի մօտ սկաուտական կազմ մը ունենալ, երեսի վրայ ձգած են մեր մատաղ սերունդի դաստիարակչական դործը, իրենց ամբողջ ուժը սպառելով Ֆութպօլի խումբին վերայ: Եղբայր Դանիէլեանը, շատ զէշ աչքով պիտի կարգայ այս տողերը, եւ Եղբայր Օհանէսեան կարօն, վարչութեան նախագահ Եղբ. Ս. Սողոմոնեան, ինչպէս նաեւ վարչութեան կազմին մեր միւս եղբայրները, անշուշտ յաւ աչքով չպիտի տեսնեն այս տողերը, սակայն անդին, տեղացի հայ ծնողներ, առանց զիտնալու իրենց երախաները, պատանիները, կը յանձնեն մարդոց, որոնք « Հայ Դէտ » կամ « Հայ Արի » անուններու տակ, մեր երախաները, պատանիները ուղուած ուղիով չէ որ կը դաստիարակեն: Տեսանք, ծնողքներ, որոնց զաւակները Դէտ կամ Արի են եղած, եւ այդ ծնողքները կը կարծեն թէ Հ.Մ.Բ.Մ.ի սկաուտական շարքերուն են յանձնած իրենց զաւակները: Երբ բացատրուեցաւ իրողութիւնը, ծնողքները բերանարաց մնացին:

Լիօն - Տեսին մասնաճիւղի վարչութեան տկար կողմը մատնանշելէ վերջ, պարտք կը զգանք, յայտարարել թէ, իրենց գործունէութիւնը զովելի է մարդական զետնի վրայ: Ունին Ֆութպօլի դաշտ մը, հա-



Տեսարան մը Մարսէլի Սկաուտական բաճակումէն (15—8—46)

զարուճէկ զժուարութեանց յաղթահարելով, ձեռք բերած իրենց ձեռքերովը շինած շտիրտած, որուն մուտքի դռան վրայ կը վայլին « Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր » եւ Հ.Մ.Բ.Մ. տառերը հայերէն եւ Ֆրանսերէն: Չանազան դասակարգի պատկանող Ֆութպօլի խումբերը, բաժակ եւ մետալներով զնահատած են: Իրենց անդամներու թիւն է 200:

Վարչութեան վզին պարտք դրուեցաւ, որ ժամ առաջ զբաղուին 7էն 14 տարեկաններու կազմակերպութեամբ եւ Ազգ. Ընդհ. դաստիարակչական բարձրացման: Ատոր համար սկաուտ ղեկավարներու եւ « գատր »ի պէտք ունին, կազմակերպելու ենթաշրջանի բոլոր մասնաճիւղերու սկաուտական աշխատանքը:

Իրենց ենթաշրջանի սահմաններուն մէջ ունին երկու սկաուտ ղեկավարներ, յանձինս Պաղտիկեան Յովհաննէսի (Սէն-Մօռիստը-Պէյնո) եւ «Մերուկ Բու»ի (Թա-

րար), եթէ վարչութիւնը կարելիութիւնը ունի վերաշիշեալները հաստատելու Լիօն կամ Տեսին, դորձի եւ բնակութեան տեսակէտով, արդէն իսկ բաղմամբ մը սկսուտներ ալ, կարող ենք հոգ կրթել եւ փրկել:

Նոյն ենթաշրջանի մեր միւս մասնաճիւղերը վերակազմութեան շրջանը կը բոլորեն, եւ շրջանիս պատգամաւորականէն վերջ, առիթը կ'ունենանք, խօսելու իրենց վերելքին մասին:

Վիէն: Թնճուկ եւ հանգոյց: Հոս Հ.Մ. Ղ.Մ. ի վարչութիւնը մեր Միութեան տըւած է կուսակցական գոյն: Դոնփակ խանութ է եղած Հ.Մ. Լ.Մ. ի Մ.Ճիւղը եւ ներս կ'ունեն անոնք որ միայն իրենց փողը կը հնչեցնեն: Բացատրեցինք վարչութեան նախագահ եղբայր Փափաղեանի եւ քարտուղար եղբայր Տէրմօյեանի, անօգուտ, պարզիւն: Յուով է որ ըսենք թէ, «Յառաջ» ի էջերուն մէջ ալ ապստամբութեան դբօջ պարզեցին հրաւիրելով իրենց սխալ ուղղութեան բոլոր Մ.Նիւլերը: Սեւ թաթեր, սեւ գլուխներ, սեւ տոտիկներ տեսան ամէն տեղ, ...անցինք:

Վիէնի Հ.Մ. Լ.Մ. ի խումբը, որուն նախագահը եղբայր Վ. Այթունեան 1919ին Պէշիկթաշի մեր սկսուտներէն էր, վարչական կազմը եւ 150ի մօտեցող անդամները, նախկին Հ.Մ. Լ.Մ. ախաններ, երկա՛ր ատեն է փակ դտած են «խանութիւն» դուռը: Ուստի՛ Առժմ. Կեդրոնի որոշմամբ, կազմեցինք Վիէնի Արարատ Հ.Մ. Լ.Մ. ի մասնաճիւղը վերոշիշեալներէն:



Սէն եւ Սէն-է-Ուազ (Փարիզ) ենթաշրջանն ալ մեծ աշխատանքի մէջ է: Մեր յարգելի նախագահը եղբայր Գառլօ Շահինեան, իրենց գործունէութիւնը վարձատրելու մտօք, եւ խոշոր պահասով դոցելու համար, ազնիւ զաղափարը ունեցաւ, Փութպօլի եւ աթլէթիզմի յատուկ, ինչպէս նաեւ սկսուտական «գատր» ի պատրաստութեան «Դպրոց - Բանակատեղի» ի մը յարմարող դաշտ մը գնելու:

Սկսուտական կազմը, եռուղեռի մէջ է, սունկի նման կը բուսնին սկսուտական, դայլիկներու եւ կայտերու խմբակները: Պուա-Գօլօմպի մէջ եղբայր Դաւիթ Յովհաննէսեան, երկար աշխատանք եւ զոհողութիւններէ վերջ ոտքի հանած է 100եակ մը դայլիկ, սկսուտ թէ կայտեր, որոնց երգման արարողութիւնը տեղի ունեցաւ վերջերս Փարիզի Մայր Եկեղեցին, եւ անցեալ օր, այդ երեք խումբերուն առաջնորդներուն եւ վարիչներուն, աստիճանաբաշխումը տեղի ունեցաւ, Խորհրդային Հայաստանի տարեդարձի օրը հարիւրաւոր հանդիսականներու ներկայութեան Խ. Հայաստանի ներկայացուցիչ քաղաքացի Հինայէկեանի ձեռամբ, Պուա-Գօլօմպի մէջ:

Անդին Քաշանի մէջ, եղբայր Սերոբ Սերոբեան գործելու վրայ է եւ այդ մասնաճիւղին մէջ արդէն ոտքի հանած է դայլիկներու եւ սկսուտներու խումբեր:

Կը յուսանք, որ պատգամաւորականին ընթացքին, Յրանսայի Հ.Մ. Լ.Մ. ի լնդհանուր աշխատանքներու շարքին սկսուտական կազմին ալ շունչ եւ ձեւ տանք, յաջող կերպով կարելիութիւնը ունենալու, Միջազգային ճամբարին մասնակցութեան, որ տեղի կ'ունենայ 1947ին Յրանսայի մէջ:

Ահա այսպէս: Մի՛շտ, բարձրացի՛ր եւ բարձրացո՛ւր:

ՇՐՋԱՀԱՅԵԱՑ ԵՂՋԵՐՈՒ

### ՍԿՍՈՒՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հ.Մ. Լ.Մ. ի Առժմ. Կեդր. վարչութիւնը՝ զարկ տալու համար սկսուտութեան տարածման եւ զարգացման, ձեռնարկած է, յատկապէս մշակուած ծրագրի մը հիման վրայ՝ սկսուտական դասաւանդութեանց, որոնք տեղի պիտի ունենան կեդրոնի դրասենեակին մէջ:

Այս դասաւանդութեանց նպատակն է պատրաստել հմուտ սկսուտներ, որոնք ի վիճակի ըլլան կազմակերպելու եւ առաջնորդելու սկսուտական խումբեր:

**ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ  
ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԸ**

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ  
ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ**

Սիրելի Եղբայրներ՝,

Կը հաստատենք մեր թիւ 3 շրջաբերականը, որով կը հրաւիրէինք Վարչութիւնները՝ մինչեւ Դեկտ. 7 մեզ հասցնել Մասնաճիւղերու անդամական ցանկը, որպէսզի ի վիճակի ըլլայինք ձայներու արդար բաշխում մը կատարելու՝ յառաջիկայ Շրջ. Պատգմ. Ժողովին համար:

Դեկտ. 25ին, Փարիզի մէջ տեղի կ'ունենայ Փարիզ-Մարսէյլ Միջմասնաճիւղային Փութպօլի մրցում մը եւ յաջորդ օրը, 26ին կը բացւի Ֆրանսայի Շրջ. Պատգմ. Ժողովը, որ պէտք է վերջանայ 27ի երեկոյեան ամէնէն ուշը, նկատի առնելով մեծ ծախքերը որոնց կ'ենթարկուին Մաս-

նաճիւղերը եւ Կեդր. Վարչութիւնը՝ այս առթիւ:

Վարչութիւնները անշուշտ, այժմէն միջոցներ կը խորհին իրենց պատգամաւորներու ծախքերը հոգալու համար:

Կեդր. Վարչութիւնը արդէն ձեռնարկած է պատգամաւորներու երկու օրուան բնակութեան վայրերը ապահովելու: Չափազանց դժուար է նոյնիսկ պանդոկներու մէջ՝ մէկ կամ երկու զիշերուան համար սենեակ գտնել: Վարչութիւնները մեծապէս պիտի զիւրացնէին մեր գործը՝ մեզ հաղորդելով անունները այն պատգամաւորներուն, որոնք կրնան Փարիզի մէջ՝ բարեկամներու կամ ծանօթներու տունը զիշերել:

Կը թելադրենք Վարչութիւններուն. — ա) Այժմէն իսկ պատրաստել իրենց նիւթական եւ բարոյական գործունէութեան զեկոյցը եւ մեզ զրկել առառաւելն մինչեւ



ԵԳԻՊՏՈՍ. — Չախէն աջ՝ Յ. Այրանեան, Խ. Աստուրեան, Ե. Ստեփանեան, Հայկ Ճիզվեան, Վ. Այբունեան, Ե. Աւագեան, Օր. Տիգ. Ճիզվեան եւ Լեւոն Բաբեան:

Դեկտ. 20, որպէսզի Կեդրոնի Դիւանը՝ ժամանակ չահելու համար, ի վիճակի ըլլայ ամփոփելու բոլոր Մասնաճիւղերու զեկոյցները եւ ներկայացնելու ժողովին .  
բ) Մեզ հաղորդել մինչեւ նոյն թուականը, թելադրութիւններ եւ առաջարկներ՝ որոնք կը փափաքին Պատգմ. ժողովին քննութեանը ենթարկել:

**ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ**

Իբր օրակարգի նիւթեր ձեզի կ'առաջարկենք.

- ա) Զեկոյց Մասնաճիւղերու,
- բ) Զեկոյց Ֆրանսայի վերակազմու - քեան մասին,
- գ) Եւրոպայի շրջանի կառնադիր,
- դ) Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիւղերու եւ Սկաուտական կազմերու իրաւասութեանց նշդում,
- ե) Զեկոյց «Հ.Մ.Ը.Մ. - ՀԱՅ ՍԿԱՈՒՏ»ի եւ տարածման միջոցներ,
- զ) Թելադրութիւններ եւ առաջարկներ,
- է) Ընտրութիւն Շրջ. Կեդր. վարչութեան:

Այս նիւթերը մեկնարանուած ըստ կարելոյն եւ ներքին կանոնադրի նախագծով, մօտ ատենէն ձեզ կը հաղորդուին մասնաւոր շրջարերականով:

ԴԻԻԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԱՌԺՄ.ԿԵԴՐ.ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

**Յ Ա Յ Տ Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն**

Բաղմաթիւ վայրերէ մեզ դիտել կուտան թէ պ. Լեւոն Սապօճեան իր Քրանսերէն մէկ հրատարակութիւնը մեր անդամներուն եւ համակիրներուն կը վաճառէ, օգտագործելով Հ.Մ.Ը.Մ.ի անունը:

Կը յայտարարենք թէ յիշեալը եւ իր հրատարակութիւնը կապ չունին Հ.Մ.Ը.Մ.ի հետ:



**ՕՐ. ՇՈՒՇԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ**

ՊուէնուսԱյրէսի «Շարժում»ը իր 19 Հոկտ.ի բիւլլէն մէջ կը գրէ.—

Հոկտեմբեր 11ին տեղի ունեցաւ Պելկրանոյի Անգլիական Ազգանց վարժարանի տարեկան մարզական ողիմպիականը, Պելկրանոյի Աթլէթիք Գլուպին մէջ հետաքրքիր բաղմութեան մը ներկայութեամբ, ղեկավարութեան Պ. Պուքի, դատաւորներ Մ. Էտուարտօ (փրոֆ.) եւ օգնականներ՝ Օր. Պլանչար, Մէտտանօս Մօլ եւային:

Սոյն վարժարանը կը յաճախեն նաեւ հայ աղջիկներ, որոնց մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներէն օր. Շուշան Շահինեան տարինրէ ի վեր աչքի կը զարնէ իր մարզական կարողութեամբ ու ճկունութեամբ:

Շնորհալի օրիորդը շահեցաւ մէկ առաջնութիւն, երկու երկրորդութիւն եւ մէկ երրորդութիւն, հետեւեալ մրցումներուն մէջ, իրեւ Ֆինայխտ:

Ա. Քաթէկորի.արգելքով վաղրի մէջ առաջին Շուշան Շահինեան: Բ. օր. Պէնէտիկթ:

Հեռադրութիւն ցատկելու մէջ Շուշան  
Շահինեան երկրորդ, իսկ բարձրութիւն  
ցատկելու մէջ կրկին երկրորդ:

220 մէք վագֆի մէջ Շուշան շահեցաւ  
երրորդութիւնը:

Տեղոյս անդրիական թերթեր «Սթան -  
տարտ» եւ «Պ. Արէս Հէրայտ» շարաթ  
օրուայ թիւին մէջ տունն սոյն մրցումին  
նկարագրակաւնը:

Շուշանը լաւ մարդիկ է եւ իր հայկա -  
կան շնորհալի խառնուածքով պատիւ կը  
բերէ մեզ:

Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք:

### ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՄԸ

Դեկտ. 28ին, Մարտէյլ, Սէնթ'Անի Սկա -  
ուտները կազմակերպած էին սկաուտա -  
կան շքեղ հանդէս, պատուոյ նախագա -  
հութեամբ կաթ. լիազօր պատուիրակ Ար -  
տաւազդ Արքեպիսկոպոսի: Խուռն բազ -  
մութեան մը ներկայութեան Սկաուտները  
յաջորդաբար կատարեցին արտասանու -  
թիւններ, խմբերգներ, շուետական մար -  
զանքներ: Ջեմ հետաքրքրութեամբ զիտ -  
ւեցաւ բանակումի կրակը:

Այս հանդէսին մէջ՝ Ծնողական Խոր -  
հուրդին կողմէ, պ. Միսաք Խրալեան խօ -  
սեցաւ գեղեցիկ ճառ մը, զոր կ'ամփոփենք  
ստորեւ.

— «Այսօր հաւաքուած ենք այստեղ վա -  
յելելու Հայ Մարմնակրթական Ընդհ. Մի -  
ութեան Սէնդ-Անի Սկաուտներու անդրա -  
նէկ բացման հանդէսը, դարձեալ օտարու -  
թեան մէջ աւա՞ղ:

Հ.Մ.Ը.Մ. ր ծնաւ 1918ին: Տակաւին  
խանձարուրին մէջ էր երբ դժբախտ պա -  
րագաներու բերմամբ, հարկադրուեցաւ  
յօ՛ւել իր բնախարհը եւ իր ծնող մօրը հետ  
սյանդիստութեան ցուպը առած դիմեց օ -  
տար աշխարհներ, օտարութեան մէջ խը -  
մորուեցաւ իր պատանութիւնը եւ իր չա -  
փահատութիւնը:

Այս անգամ միայն հայ անհատը՝ հայ  
մարդը էր պանդիստութեան դիմող եւ օ -  
տարութեան մէջ Թափառողը, այլ նաեւ


հայ եկեղեցին, հայ մշակոյթը, հայ միտ -  
քը, հայ հանճարն ալ թափառական է հայ  
մարդուն պէս, եւ այս ամէն սրբութիւն -  
ները փրկելու եւ պահպանելու համար  
այլասերումէ եւ ուժացումէ օտարութեան  
մէջ հերոսներու պէտք ունէինք:

Հերոսները միայն անոնք չեն որ պա -  
տերազմի դաշտին վրայ զէն ի ձեռին կը  
պաշտպանեն ժողովուրդը իրենց արեան  
գնով: Եւ շրոսներ են նաեւ անոնք որ օտա -  
րութեան մէջ առնականութեամբ եւ քա -  
ջութեամբ կը պայքարին եւ կը կռուին ա -  
հաւոր ոսոխի մը՝ ճերմակ եւ դեղին ջար -  
դերուն դէմ: Այսպէս՝ հերոսներ են հայ  
դրչի եւ մտքի վաստակաւորները, հայ հո -  
գեւորականը, հայ ուսուցիչը, հայ ար -  
ուեստադէտը եւ բոլոր ազգասէր եւ հայ -  
րենասէր կազմակերպութիւնները, որոնք  
իրենց սրտէն, իրենց հոգիէն, իրենց աւի -  
նէն, իենց շունչէն, իրենց հանճարէն բան  
մը կը նուիրեն այս վտարանդի հայու -  
թեան, մաս առ մաս, կաթիլ առ կաթիլ  
քամուելով հատնելով... Անբասիր եւ ա -  
նաչառ կերպով հայութիւն մը կերտել  
նոր սերունդէն, մատաղ սերունդէն:

Եւ շրոսներ են նաեւ Հ.Մ.Ը.Մ. ի հիմնա -  
դիրները, վարիչները եւ խմբապետները,  
որ 28 տարին ի վեր զերազոյն զոհողու -  
թիւններով, առանց դոյզն վարձատրու -  
թեան, կը դուրդուրան այս ազգասէր եւ  
հայրենասէր կազմակերպութեան վրայ եւ  
Հ.Մ.Ը.Մ. ի հսկայ ցանց մը տարածեցին  
աշխարհի չորս ծագերուն, ուր որ երկու  
Հայեր կային, Եգիպտոս, Սուրիա-Լիբա -  
նան, Յրանսա, Յունաստան, Իտալիա,  
Պարսեան երկիրներ, Հարաւային եւ  
Հիւսիսային Ամերիկա կուռ եւ հուժկու  
Միութիւններ հիմնեցին:

Ի՞նչ է անոր ծրագիրը եւ նպատակը:  
Պատրաստել քաջաոգիք եւ ազնիւ Հա -  
յեր. մարտըր եւ բարոյական նկարագրով,  
յօրացնել հայ մանուկին եւ պատանիին  
դճերները, իմաստունին խօսքը գործի  
վերածել ճառողջ միտք առողջ մարմնի  
մէջ»:

Ահա թէ ի՞նչ կ'ըսէ Հ.Մ.Ը.Մ. ր իր դա -  
ւանանքին մէջ.





«Կերդնում ըլլալ հաւատարիմ Աստու-  
ծոյս, ծառայել ազգիս եւ հայրենիքիս»:

Հայրենակիցնե՛ր, առկից աւելի նուիրա-  
կան ուխտ չի կրնար ըլլալ մարդկային  
լեզուին մէջ: Այս Երզումը սրբութիւն  
մըն է Հ.Մ.Ը.Մ.ի համար:

Հ.Մ.Ը.Մ.ի նպատակն է օտարութեան  
մէջ Հայր հայ պահել, սուրբեցնել հայ լե-  
զուն, Հայոց պատմութիւնը, որպէս զի  
բարտաւոր օր մը (որ մօտ է արդէն) դայն  
յանձնէ իր մօրը՝ Խորհրդային Հայաստա-  
նի:

Օտարութեան մէջ պէտք է դուրդուրալ  
մեր միակ ժառանգութեան՝ հայ լեզուին  
վրայ՝ որովհետեւ միայն ու միայն այս  
հօր եւ անխորտակելի դէնքով կրնանք  
յաղթել ճերմակ սպանդին եւ աւերիչ ու-  
տիճին:

Մեծն Տիգրաններու եւ Տրդատներու  
սուրբը փշուռեցան, գահերը կործանե-  
ցան, բայց Մեսրոպեան 36 աշտանակները  
հազար հինգ հարիւր տարի է որ յաղթա-  
պանծօրէն կը լուսաւորեն հայ ժողովուր-  
դը՝ ցոյց տալով ուղին առանց ընկրկումի  
եւ յուսալքումի:

Ով որ հայ սկաուտ մը, դայլիկ մը եւ  
կայտ մը կը հաղուեցնէ, եկեղեցիին  
խունկ ծխած կ'ըլլայ. ով որ հայ մանուկ  
մը կը փրկէ ալլասերումէ, Հայաստանի  
հազարամեայ չէնքերուն նոր քար մը  
դրած կ'ըլլայ:

Ահա այս նպատակով Սէնդ-Անի (Մար-  
սէյլ) Ծնողական Խորհուրդը եւ խմբա-  
պետները կազմակերպած են այս շքեղ  
բացման հանդէսը ապացուցանելու հա-  
մար թէ (45) քառասուն հինգէ աւելի  
Կայտեր եւ Սկաուտներ պիտի փրկուին  
ձեր օժանդակութեամբ:

ՄԻՍԱՔ ԽՐԱԼԵԱՆ



ՍՍՏՅԱՆՔ

« ՅՈՒԹՊՈՒ » . — Թարգմանարար ամ-  
փոփուած Աւետիս Սարգիսեանի կողմէ.  
հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Երուսա-  
ղէմի Մասնաճիւղին, Սուրիա-Լիբանանի  
Շրջ. վարչութեան հաւանութեամբ:

Որքան կը յիշենք, առաջին եւ շատ յա-  
ջող փորձ մըն է որ կը կատարուի ձեռն-  
հասութեամբ, հայ մարդկան նիհար դը-  
բականութիւնը օժտելու Փութպօլի կա-  
նոնները թուող ու բացատրող դրքոյկով  
մը:

Փութպօլը, մեր մէջ՝ առաջին օրէն իսկ,  
եղած է միակ խաղը որ հրապուրած է մեր  
երիտասարդութիւնը եւ ջերմ հետաքրք-  
րութեամբ՝ մարդադաշտ հաւաքած հա-  
սարակութիւնը:

Հակառակ ատոր, լրագրական մէկ քանի  
յօդուածներէ դատ, խաղին վերաբերեալ  
որ եւ է լուրջ հրատարակութիւն չենք ու-  
նեցած:

Եղբ. Ա. Սարգիսեանի այս ձեռնարկը  
կուզայ գոհացնել զգալի պակաս մը: Մեր  
դնդասէրներն ու մանաւանդ խաղացողնե-  
րը՝ հող պիտի դտնեն ինչ որ անհրա-  
ժեշտ է:

Ա. մասի 17 յօդուածները, 20 պատկեր-  
ներով մանրամասնօրէն կը թուեն խաղին  
կանոնները:

Բ. մասը՝ սահուն ու հաճելի հայերէ-  
նով մը կը բացատրէ խաղալու արուեստը:


Կ'արժէ որ ամէն մէկ խաղացող ի ձեռին  
ունենայ օրինակ մը:



Ստացանք ընդամէնը 28 օրինակ: Մեր  
Փութպօլի խումբերուն կը յանձնարա-  
րենք այժմէն ապահովել մէկական օրի-  
րարենք այժմէն ապահովել մէկական օրի-  
նակ: Գին՝ 60 Քրանք: Գրմել Հ.Մ.Ը.Մ.ի  
Կեդրոնատեղին:

Le Gérant : K. GIBDOUNY

Imp. A. Des Agopian, 17, Rue Dussane



Հ. Մ. Ը. Մ.

Տարեկան բաժնեգին 600 Փր.

Զեռքէ հատը 50 Փր.

Դրամական առաքման համար.

U. G. ARMENIENNE

Mr J. Artinian

Թղթակցութեան հասցէ

U. G. ARMENIENNE

« Homenetmen »

32 - 34 Rue St. Lazare - Paris (9<sup>e</sup>)

